

Նարեկ Սարգսյան

Հոգու ամրոցը

Երևանում ժամը 15:40 էր: Արմենն իր աշխատասենյակում այցելուի հետ աշխատում էր: Աշխատասենյակը վերանորոգված էր ժամանակակից եվրոպական չափանիշներով, ու այնտեղ հաճելի էր աշխատելը թե՛ Արմենի և թե՛ նրա այցելուների համար:

Արմենը Հայաստանի ամենահայտնի հոգեթերապևտներից ու կլինիկական հոգեբաններից մեկն էր: ԱՄՆ-ում ու Եվրոպայում բազմաթիվ մասնագիտական վերապատրաստումներ էր անցել՝ բարձրացնելով որակավորումը, մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները: Ուներ անձնական յութուբյան ալիք, որտեղ տեղադրում էր իր մասնագիտական տեսանյութերը, իսկ սոցիալական ցանցերով էլ կիսվում էր իր հոդվածներով: Ուներ հազարավոր հետևորդներ: Նա 41 տարեկան, միջահասակ, փոքրամարմին, սպիտակ մաշկով, դեմքի նուրբ դիմագծերով տղամարդ էր: Իր ողջ կյանքի 41 տարիները նվիրել էր մասնագիտական աճին, ամուսնացած չէր, անձնական կյանք չուներ: Ապրում էր Երևանում, հիփոթեքային վարկով ձեռք բերած թանկարժեք նորակառույց բնակարանում՝ ծնողների հետ: Իր աշխատասենյակն էլ վարձակալել էր:

-Արմեն ջան, շատ շնորհակալ եմ, քո սեանսներն ինձ շատ մեծ օգուտ տվեցին: Ես արդեն ազատվել եմ իմ վախերից ու տագնապներից,-ասաց այցելուն, ով մոտ հիսուն տարեկան տղամարդ էր:

-Տեսնու՞մ ես, ես ասում էի, որ կօգնեմ, իսկ դու թերահավատ էիր,-ժպտալով ասաց Արմենը:

-Քեզ ասե՞լ էի, որ մինչ քեզ մոտ գալը էն կնոջ մոտ էի գնում:

-Քնար Պետրոսյանի՞:

-Հա, իրա մոտ: Մի ամիս տարավ-բերավ, ահագին փող ուզավ, բայց ինձ ոչ մի օգուտ էլ չտվավ,-նկատեց այցելուն:

-Լավ, կարևորը, որ մենք միասին հաղթահարեցինք քո տագնապներն ու վախերը:

-Հա, ճիշտ ես Արմեն ջան:

Արմենն այցելուին ճանապարհելուց հետո իր համար սուրճ պատրաստեց, դուրս եկավ բաց պատշգամբ՝ սուրճը մաքուր օդում վայելելու համար: Չէր հասցրել սուրճն ամբողջովին խմել, երբ հնչում է դռան զանգը:

<<Էս Կարենը ինչի՞ շուտ եկավ: Ախր պայմանավորվել էինք, որ 16:30-ին պիտի գար: Չթողավ գոնե մի քիչ հանգստանամ>>,-մտածեց Արմենն ու գնաց դուռը բացելու:

Կարենը չէր, այլ 25-30 տարեկան մի երիտասարդ կին էր՝ միջահասակ, թուխ մաշկով, նշաձև աչքերով, ուսերին թափված սև վարսերով: Դիմագծերն ու կառուցվածքը շատ համաչափ էին: Հագել էր կիսաշրջազգեստով կոստյում: Կիսաշրջազգեստը ծնկներից մի փոքր վերև էր՝ ընդգծելով գեղեցիկ ոտքերը:

-Բարև Ձեզ,-մեղմ ու հանգիստ ձայնով ասաց այդ կինը:

-Բարև Ձեզ, համեցեք,-շլացած այդ կնոջ գեղեցկությունից՝ մեխանիկորեն ասաց Արմենը:

Ներս հրավիրելով՝ Արմենը կնոջը խնդրեց նստել:

-Լսում եմ Ձեզ, ասացեք՝ ի՞նչ խնդրով եք եկել:

-Ես եկել եմ անձնական խնդրով: Տեսել եմ Ձեր վիդեոները, կարդացել Ձեր գրածները Ֆեյսբուքում: Ես Ձեզանով հիացած եմ,-մեղմ ու ցածր ձայնով, բայց և արտահայտչական ու գրավիչ միմիկայով և շարժուձևով ասաց այդ կինը:

-Դե ասեք, ի՞նչ խնդիր ունեք, ի՞նչն է Ձեզ անհանգստացնում,-անհամբեր հարցրեց Արմենը:

-Խնդիրն իմ մայրն է: Ես արդեն երկար ժամանակ է, ինչ կոնֆլիկտ ունեմ նրա հետ . . .

Հնչում է Արմենի սմարթֆոնի զանգը, Կարենն էր՝ իր այցելուն, որի հետ պայմանավորված էր:

-Հա Կարեն ջան,-պատասխանելով հեռախոսազանգին՝ ասաց Արմենը:

-Բարև Ձեզ, Արմեն ջան:

-Բարև Կարեն:

-Արմեն ջան, ես մի 5 րոպեից Ձեզ մոտ կլինեմ,-ասաց Կարենը:

-Եղավ, արի:

Հեռախոսազրույցն ավարտելուց հետո Արմենը հարցրեց .

-Ի՞նչ է Ձեր անունը:

-Աննա:

-Աննա ջան, ընդհանուր առմամբ ինձ մոտ գալու համար՝ այցելուներս նախօրոք հերթագրվում են, ես ժամ եմ նշանակում: Դուք ինձ մոտ եկել եք առանց հերթագրման: Ես սիրով Ձեզ հետ կաշխատեի, բայց հիմա ինձ մոտ մարդ պետք է գա, որի հետ նախօրոք ժամ եմ պայմանավորվել: Արի Ձեզ ժամ նշանակեմ,-ասաց Արմենը՝ վեր կենալով ու մոտենալով համակարգչին,-վաղը՝ ժամը 17:00-ին, ես ազատ ժամ ունեմ, Ձեզ հարմա՞ր է այդ ժամին գալ ինձ մոտ:

Յատուկ Պոէմ

-Այո, իհարկե,-ժպտալով շշնջաց Աննան:

-Շատ լավ: Դե ուրեմն, պայմանավորվեցինք:

Արմենը վեր կացավ ու բարձր տրամադրությամբ ճանապարհեց Աննային:

***

Աննան, դուրս գալով Արմենի մոտից, հանեց սմարթֆոնն ու հավելվածով տաքսի պատվիրեց: Մինչ տաքսին կմոտենար, նա որոշեց զանգահարել:

-Ալո, ես եմ,-ասաց Աննան:

-Չ՛ը, ի՞նչ արիր,-լսափողի մյուս կողմից անհամբեր ձայնով հարցրեց մի կին:

-Արեցի էնպես, ոնց որ Դուք էիք ասել: Նա վաղը՝ ժամը 5-ին, ինձ այցի ժամ է նշանակել:

-Շատ լավ: Դու քո գործն արեցիր: Գնա՛ տուն: Ընթացքում կապի մեջ կլինենք:

-Դե լավ, կապի մեջ,-պատասխանեց Աննան:

***

Հաջորդ օրը՝ նախատեսված ժամին, Արմենը անհամբեր սպասում էր Աննայի ժամանելուն: Ինչքան ժամը մոտենում էր 17:00-ին, այնքան նրա սիրտը սկսում էր ավելի արագ բաբախել: Պայմանավորված ժամից անցել էր 20 րոպե, բայց Աննան չկար: Արմենին համակել էր տագնապը և սպասումը:

<<Ինչու՞ է ուշանում: Պետք ա արդեն էստեղ լիներ: Կարո՞ղ ա պրոպկաների մեջ ա>>,-մտածում էր՝ անհանգիստ այս ու այն կողմ գնալով:

Ժամն արդեն 17:45 էր: Արմենը, թեև հասկանում էր, որ Աննան էլ չի գա, բայց շարունակում էր սպասել ու հուսալ:

<<Տեսնես ինչի՞ չեկավ: Փոշմանե՞ց, թե՞ չկարողացավ գալ ինչ-ինչ պատճառներով: Ախր ես պետք ա երեկ հետն աշխատեի, իսկ Կարենին հետ ուղարկեի: Մեկ ա Կարենն ինձնից չէր նեղանալու, իսկ նա կարող ա նեղացել ա, որ իրեն հետ ուղարկեցի: Պարզապես ցույց չտվեց>>,-մտքերի մեջ խորասուզվել էր Արմենը՝ շարունակ վերլուծելով ու փորձելով հասկանալ, թե ինչու Աննան չեկավ:

***

Անցավ երեք օր: Արմենը, թեև առավոտից երեկո լարված աշխատում էր այցելուների հետ, բայց և այնպես Աննան նրա մտքից դուրս չէր գալիս:

Երեկոյան ժամը 22:00 էր, Արմենը տան էր: Մտավ իր ֆեյքբուքյան էջը՝ փոքր-ինչ ցրվելու համար: Եվ հանկարծ իր՝ Ֆեյսբուքում տեղադրած պատմության դիտողների թվում տեսավ Աննային: Անհամբերությամբ մտավ Աննայի օգտահաշիվն ու տեսավ նրա հրապարակած նկարները: Այդ պահին նրա ուղեղում ասես «քիմիական պայթյուն» տեղի ունեցավ . ակտիվացան հաճույքի և պարգևատրման համակարգերը, ուղեղում ուժեղացավ դոֆամինային ակտիվությունը, իսկ ադրենալինի ու նորադրենալինի ազդեցությամբ նա զգաց հուզմունքի և էներգիայի անսովոր ալիք :

Ուզեց ընկերության հայտ ուղարկել, բայց մի պահ կանգ առավ .

<<Մի րոպե, բայց ճի՞շտ է, որ ես նրան ընկերության առաջարկ ներկայացնեմ: Էդպես ճիշտ չի, բոլորն ինձ են ընկերության հայտ ուղարկում, իսկ ես պետք է զիջե՞մ իմ դիրքերն այս աղջկա առաջ>>,-մտածեց ու որոշեց չուղարկել հայտը: Բայց դրանից հետո սկսեց տանջվել, ընկավ լարվածության ու տագնապի մեջ: Գիտակցությունն ու արժանապատվությունը թույլ չէին տալիս ընկերության հայտն ուղարկել, իսկ սիրտն ասես աղաղակում էր . <<Հայտն ուղարկի՛ր նրան, շու՛տ արա>>:

Վեր կացավ տեղից, դուրս եկավ պատշգամբ, մի քանի անգամ խորը շունչ քաշեց, ջուր խմեց, որպեսզի իր մեջ մարի րոպեական ցանկությունը:

Յատուկ Դոեմ

<<Իսկ եթե գրեմ ու հարցնեմ, թե այն օրն ինչու՞ չեկավ: Չէ՛, ստացվում ա, որ ես խնդրում եմ իրան, որ գա ինձ մոտ, այնինչ ինքը պիտի ինձ հետ կապվեր ու բացատրեր, թե ինչի չի եկել: Բայց ինքը տենց բան չի արել: Էդ նշանակում ա, որ փոշմանել ա ու ինձ մոտ չի գա>>,-մտածում էր Արմենը:

Որոշեց պառկել՝ քնելու: Չկարողացավ քնել, զգաց, որ հետզհետե կրծքավանդակում ինչ-որ մի բան էր ծանրանում: Դա Աննային գրելու հիվանդագին ցանկություն էր, որը րոպե առ րոպե ավելի էր ուժգնանում:

<<Էս հետս ի՞նչ ա կատարվում, ինչի՞ եմ ես տարվել էդ կնոջով: Ախր նրան չեմ էլ ճանաչում: Մի անգամ եմ տեսել ու շփվել, էն էլ շատ կարճ ժամանակով: Էսպիսի բան երբեք ինձ հետ չի եղել: Հա, ես նրան սիրահարվել եմ, բայց դա չպիտի էս ձևով արտահայտվեր>>:

Անցավ երկու ժամ, բայց Արմենն այդպես էլ չկարողացավ քնով անցնել: Ի վերջո հիվանդագին ցանկությունը հաղթեց բանականությանը, ու նա արթնացավ, վերցրեց սմարթֆոնն ու սկսեց գրել .

<<Բարև Ձեզ Աննա: Ես այն օրը Ձեզ սպասեցի, բայց Դուք չեկաք: Ինչ-որ բա՞ն էր պատահել>>:

Գրեց ու ուղարկեց հաղորդագրությունը:

<<Արդեն ուշ գիշեր ա, ու ինքն էլ երևի քնած ա: Առավոտը կտեսնի ու կպատասխանի, և ես դուրս կգամ էս անորոշությունից>>,-մտածեց ու թեթևացած պառկեց քնելու: Անկողնում արդեն շատ հանգիստ էր զգում: Տագնապը, վախը և անորոշության զգացումը անհետացել էին:

***

Արմենն արթնանալուն պես արագ վերցրեց սմարթֆոնը՝ ստուգելու, թե Աննան իր նամակին պատասխանե՞լ է: Մտավ նամակների բաժինն ու երբ տեսավ, որ ստացել է պատասխանը, սիրտը բերկրանքից ու երանությունից կծկվեց: Մի պահ վախենում էր բացել նամակն ու կարդալ, բայց ի վերջո սիրտ առավ, բացեց ու կարդաց: Աննան նամակին պատասխանել էր հետևյալ կերպ .

<<Բարև Ձեզ, կներեք ես պետք է Ձեզ տեղյակ պահեի, որ չեմ գալու: Այդ օրն անսպասելի գործեր ծագեցին, ու ես չկարողացա գալ: Հիմա խառն եմ: Էս երկու օրս գործերս կավարտեմ ու Ձեզ մոտ կգամ>>:

Նամակը կարդալուց հետո Արմենը վերջին տարիներին այդքան ուժեղ դրական էմոցիա չէր ունեցել, ինչպես հիմա ունեցավ:

<<Փաստորեն նա ոչ թե փոշմանել ա, այլ չի կարողացել գալ: Դե բոլորիս մոտ էլ էդպես պատահում ա: Շուտով նա կգա ինձ մոտ>>:

Դրանից հետո Արմենը լվացվեց, նախաճաշեց ու շատ բարձր տրամադրությամբ գնաց աշխատանքի:

***

Անցավ չորս օր: Աննան չեկավ ու չգրեց: Արմենը կրկին ակամայից ընկավ տագնապային հոգեհուզական վիճակի մեջ և տեղի տալով լարվածությանն ու հոգնածությանը՝ սկսեց գրել Աննային՝ հարցնելով նրա որպիսությունը և այն, որ սպասում է իրեն: Աննան պատասխանում է, որ կարևոր գործով արտասահման է գնացել ու երբ վերադառնա, անպայման կգա Արմենի մոտ: Դրանից հետո Արմենը կախվածություն է ձեռք բերում Աննային հաղորդագրություններ ուղարկելուց: Ամեն անգամ նա առիթ ու պատճառ էր հորինում նրան գրելու համար՝ իբր անհանգստացած է նրա հոգեկան վիճակով ու խորհուրդներ տալիս:

Աննան Արմենի նամակներին միշտ պատասխանում էր ուշացումով, այն էլ այն ժամանակ, երբ վերջինս քնած էր լինում, որպեսզի իրենց մեջ ակտիվ նամակագրական երկխոսություն չսկսի: Բացի այդ Աննան Արմենի երկարաշունչ նամակներին պատասխանում էր շատ կարճ ու սառը:

Բայց Արմենն այդ ամենը չէր նկատում, չէր վերլուծում:

Անցնում է մոտ մեկ ամիս: Աննան սկսում է աստիճանաբար ավելի ջերմ պատասխանել Արմենի նամակներին ու ասում, որ շուտով կվերադառնա արտասահմանից ու անմիջապես կգա նրա մոտ:

Մի օր՝ հերթական նամակը գրելիս, Արմենը, տեղի տալով իր զգացմունքներին, ակնարկում է, որ զգացմունքներ ունի նրա հանդեպ: Այդ պահից սկսած՝ Աննան այլևս նրա նամակներին սկսում է չպատասխանել՝ փակվելով ինքն իր մեջ:

Արմենն սկսեց իրեն մեղադրել այն նամակի համար, որով անուղղակի սեր էր խոստովանել Աննային: Նա համոզված էր, որ ավելորդ շտապողականություն էր դրսևորել:

Տեսնելով, որ Աննան չի պատասխանում իր նամակներին, Արմենը որոշում է այլևս նրան չգրել:

Բայց հայտնվում է հոգեբանական ծանր ու անելանելի իրավիճակում: Դա տագնապային-էմոցիոնալ կախվածություն էր, որն Արմենին հանգիստ չէր տալիս: Ասես մեկը դանակով քերում էր հոգին, կորցրել էր հանգիստը: Սկսել էր միշտ մտածել այդ կնոջ մասին: Նրան գրելու ու փնտրելու հիվանդագին ցանկությունը չէր թողնում, որ նորմալ աշխատի ու զբաղվի իր առօրյա գործերով:

***

Հերթական աշնանային մռայլ ու դեպրեսիվ օրն էր Արմենի համար: Աշխատանքից տուն վերադառնալով՝ փակվել էր իր սենյակում, մտածում էր Աննայի մասին ու տխրում:

Հնչում է սմարթֆոնի զանգը . անծանոթ հեռահոսահամար էր:

-Ալո,-հոգնած ձայնով պատասխանեց Արմենը հեռախոսազանգին:

-Ալո, Արմեն, բարև,-լսափողի մյուս կողմից լսվեց մի անծանոթ կնոջ ձայն:

-Բարձ Ձեզ, ո՞վ է,-զարմացած հարցրեց Արմենը:

-Ես էդպես էլ գիտեի, որ տեղը չես բերի: Արմեն, ես եմ՝ Քնարը:

Արմենն անսպասելիի եկավ: Չէր պատկերացնում, որ այդ կինն իրեն կզանգահարի: Քնարը նույնպես մեծ համբավ ունեցող հոգեթերապևտ էր

Հայաստանում ու Արմենի հետ մրցակցում էր: Նրանք լարված հարաբերություններ ունեին միմյանց հետ: Ամեն ինչ սկսվեց նրանից, երբ Քնարը իր հարցազրույցներից մեկում քննադատեց Արմենի հոգեթերապևտիկ մեթոդները: Դրանից հետո հետևեց Արմենի հրապարակավ պատասխանը, և այդ պահից սկսած նրանք ոխերիմ հակառակորդներ էին դարձել:

-Քնար, ինչի՞ ես զանգել, ի՞նչ ես ուզում,-կոպիտ տոնով հարցրեց Արմենը:

-Արմեն ջան, վերջիվերջո կին եմ, կարո՞ղ ես չէ մի փոքր մեղմ խոսել:

-Ասա, ի՞նչ ես ուզում, ես ժամանակ չունեմ . . .

-Լավ, ասեմ: Արմեն, քեզ մոտ մի ամիս առաջ մի կին չի՞ եկել Աննա անունով,-հարցրեց Քնարը:

Արմենը զարմանքից քարացավ ու ապշեց այդ հարցից: Մի պահ լեզուն կապ ընկավ ու չէր կարողանում խոսել:

-Չ՛ը, Արմեն, քեզ հարց տվի, կպատասխանե՞ս:

-Դու այդ կնոջը ճանաչու՞մ ես:

-Եթե չճանաչեի, չէի հարցնի իր մասին: Ասա եկե՞լ ա քեզ մոտ, թե չէ:

-Ասենք թե եկել ա, հետո՞ . . .

-Արմեն ջան, խնդրում եմ հարցիս կոնկրետ պատասխանիր՝ եկել ա, թե՝ ոչ,-համառեց Քնարը:

-Այո, եկել ա, բայց դու որտեղի՞ց գիտես, որ նա եկել ա ինձ մոտ: Դու՞ ես նրան ուղարկել ինձ մոտ,-զարմացած ու միաժամանակ բարկացած հարցրեց Արմենը:

-Արմեն, սա հեռախոսի զրույց չի: Կարա՞ս վաղը գաս ինձ մոտ խոսենք:

-Բայց էդ ի՞նչ գաղտնի բան կա, որ հեռախոսով չես կարող ասել:

Յատուկ Դոէմ

-Գաղտնի բան չկա, պարզապես երբ որ քեզ ասեմ ճշմարտությունը, քեզ մոտ ավելի շատ հարցեր են առաջանալու: Ճիշտը դեմ առ դեմ զրուցելն ա: Արի՛ ինձ մոտ, ես քո բոլոր հարցերին կպատասպանեմ: Նորից եմ կրկնում, էս հեռախոսի զրույց չի:

-Լավ, վաղը ո՞ր ժամին գամ,-հարցրեց Արմենը:

-Երբ քեզ հարմար է:

-Լավ, կգամ:

-Դե կսպասեմ:

-Լավ,-ասաց Արմենն ու ավարտելով հեռախոսազրույցը՝ մտքերի մեջ ընկավ .

<<Չհասկացա: Սա որտեղի՞ց գիտի Աննայի մասին: Չլինի հենց նա էր Աննային ուղարկել ինձ մոտ, ու էս ամենի հետևում էդ կեղտոտ ու վտանգավոր կին ա կանգնած: Ախր ես ո՞նց Աննային նամակներ գրեցի: Հիմա կարող ա Քնարը դրանք հրապարակել մամուլում ու սոցցանցերում: Աննան երևի գործել ա Քնարի կարգադրությամբ, բայց հարցն էն ա, թե ի՞նչն ա ստիպել, որ նա խաղա Քնարի խաղը՝ փո՞ղը, հոգեբանական կախվածությու՞նը, թե շանտաժը . . . >>:

***

Հաջորդ օրը, պայմանավորվածության համաձայն, Արմենը գնում է Քնարի գրասենյակը: Մտնելով ներս՝ նրան դիմավորում է Քնարի օգնականը՝ Սոֆյան, ասելով .

-Բարև Ձեզ, պարո՛ն Կարապետյան, տիկին Քնարն ինձ ասել է, որ Դուք գալու եք, բայց ներկա պահին ինքը զբաղված է ու Ձեզ ընդունել չի կարող: Խնդրում եմ մի փոքր սպասել, երբ որ ազատվի, ես Ձեզ կուղեկցեմ իր մոտ:

-Լավ,-դժգոհ տոնով ասաց Արմենը:

Յատուկ Դոէմ

<<Սա հատուկ ա էսպես անում: Իր դիշովի հոգեբանական պրիոմներից ա: Իր մոտ մտնելուց առաջ փորձում ա ազդել իմ ենթագիտակցության վրա՝ իբր թե ինքն ինձնից կարևոր ա ու ես կախում ունեմ իրենից>>:

Քնար Պետրոսյանը, ով 44 տարեկան, կարճահասակ, փոքր-ինչ գեր, մազերը դեղին գույնով ներկած կին էր, իր աշխատասենյակում մենակ էր ու լարված սպասում էր:

Ներս է մտնում Սոֆյան, ով արդեն դիմավորել էր Արմենին՝ խնդրելով փոքր-ինչ սպասել:

Սոֆյան 30 տարեկան գեղեցիկ օրիորդ էր՝ միջահասակ, փոքր-ինչ նիհար, բայց սլացիկ կազմվածով, սպիտակ ու հարթ մաշկով, սև ու ալիքաձև մազերով ու նուրբ և համաչափ դիմագծերով:

-Քնա՛ր, նա եկել ա ու քեզ ա սպասում,-ոգևորված ու ուրախ տոնով ասաց Սոֆյան:

-Շատ լավ ա: Թող հլա սպասի,-ինքնագոհ նստած ու աթոռով դանդաղ այս ու այն կողմ թեքվելով՝ ասաց Քնարը:

-Հատու՞կ ես անում, որ հունից դուրս գա ու ջղայնանա,-հետաքրքրությամբ հարցրեց Սոֆյան:

-Սոֆյա, տենց հարցեր մի՛ տուր: Մեկ ա էդ քո խելքի բանը չի: Դու ավելի լավ ա գնա ու նրան ժպտալով սուրճ առաջարկիր: Հա, չմոռանաս ներողություն խնդրել իրեն սպասեցնելու համար:

-Բայց ե՞րբ ես պատրաստվում ընդունել, քանի՞ րոպեից,-հարցրեց Սոֆյան:

-Աղջիկ ջան, էդ քո գործը չի: Դու էստեղ գտնվում ես ոչ թե ինձ հարցեր տալու, այլ իմ ասածներն անելու համար: Երբ պետք լինի, քեզ կասեմ: Հիմա

ստեղից դուրս արիր,-բարկացավ Քնարը՝ ձայնը բարձրացնելով Սոֆյայի վրա:

Սոֆյան վախեցած դուրս եկավ:

Մոտ 30 րոպե էր, ինչ Արմենը սպասում էր: Վեր կացավ նստած տեղից ու որոշեց գնալ, բայց հենց այդ պահին իրեն մոտեցավ Սոֆյան, ներողություն խնդրեց սպասեցնելու համար ու ասաց, որ Քնարը շուտով իրեն կընդունի:

Անցավ ևս 20 րոպե, բայց Արմենը դեռ նստած սպասում էր: Բարկացավ ու որոշեց հեռանալ, բայց այդ պահին նրան մոտեցավ Սոֆյան ու աղերսագին տոնով ասաց .

-Պարո՛ն Կարապետյան, ներողություն եմ խնդրում, գիտեմ, որ շատ սպասեցիք: Մի քանի րոպեից տիկին Քնարը Ձեզ կընդունի:

-Լսեք, ես ժամանակ չունեմ, հենց հիմա Ձեր ղեկավարին փոխանցեք, որ եթե հենց հիմա ինձ չընդունի, ես կգնամ,-բարկացած ասաց Արմենը:

-Խնդրում եմ սպասեք, ես հիմա մտնեմ իր մոտ, գամ:

Սոֆյան շտապում է Քնարի մոտ ու քիչ անց դուրս գալով նրա մոտից՝ Արմենին ուղեկցում է վերջինիս աշխատասենյակը:

Արմենը Սոֆյայի հետ ներս է մտնում:

-Սոֆյա, դու ազատ ես, դուրս արի,-ասաց Քնարը՝ դեմքով ցույց տալով դռան կողմը:

Սոֆյան արագ դուրս եկավ Քնարի աշխատասենյակից:

Մի պահ լռություն տիրեց, բայց դա սովորական լռություն չէր: Ասես հակառակորդները մի պահ դադար էին վերցրել՝ միմյանց ուսումնասիրելու ու հոգեբանական մարտ սկսելու համար:

-Նստի՛ր, Արմե՛ն,-խախտեց լռությունը Քնարը:

Արմենը նստեց Քնարի սեղանի կողքին գտնվող աթոռին:

Յատուկ Ոդեմ

-Օգնականս քեզ սուրճ առաջարկե՞լ ա,-հարցրեց Քնարը:

-Հա, առաջարկել ա, բայց ես հրաժարվեցի, որովհետև ես չեմ եկել էստեղ սուրճ խմելու համար: Ասա, ինչի՞ համար ես ինձ կանչել:

-Ես քեզ չեմ կանչել, այլ հրավիրել եմ, որ դեմ առ դեմ զրուցենք քեզ համար կարևոր ու նուրբ հարցի շուրջ,-ասաց Քնարը՝ հայացքով ուշադիր զննելով Արմենին:

Արմենը շատ հանգիստ էր պահում իրեն: Շարժուձևի, հայացքի մեջ ոչ մի տագնապի կամ անհագստության նշաններ չկային, թեև սիրտն այդ պահին այնքան արագ էր աշխատում, որ թվում էր, թե հիմա դուրս կպայթի կրծքավանդակից: Բայց այդ ամենը Քնարի համար տեսանելի չէր, քանի որ Արմենը գիտեր քողարկել իր հույզերը:

-Ես քեզ ուշադիր լսում եմ, Քնա՛ր, ասա:

-Խոսքն իմ այցելուներից մեկի՝ Աննայի մասին է,-սկսեց խոսել Քնարը,-ես բավարար կասկածներ ունեմ ենթադրելու, որ ինքը քեզ մոտ եկել ա:

-Կարո՞ղ ես ավելի պարզ խոսել: Ի՞նչ ա նշանակում <<ես բավարար կասկածներ ունեմ>>: Լավ, ասենք թե եկել ա ինձ մոտ: Քե՛զ ինձ:

-Արմեն ջան, ինչու՞ ես էդպես թշնամաբար տրամադրված իմ հանդեպ: Ճիշտ ա, մեր հարաբերությունները հարթ չեն, բայց վերջիվերջո դու իմ կոլեգան ես, ու ես չեմ ցանկանում, որ դու հայտնվես վատ ու ծիծաղելի վիճակում:

-Քնար, կա՛մ հենց հիմա նորմալ բացատրում ես, կա՛մ էլ ես դուրս եմ գալիս քո մոտից: Ես հավես չունեմ քո խորհրդավոր ու բազմիմաստ խոսքերը լսելու,-վճռական տոնով ասաց Արմենը:

-Շատ լավ: Ասեմ: Մի քանի ամիս առաջ ինձ մոտ էր եկել Աննան՝ այն աղջիկը, որին դու փնտրում ես . . .

Յատուկ Դոէմ

-Բայց դու ի՞նչ գիտես, որ ես նրան փնտրում եմ,-հարցրեց Արմենը՝ ընդհատելով Քնարին:

-Արմեն թույլ կտա՞ս ես իմ խոսքն ավարտեմ:

-Լավ, ասա:

-Ուրեմն՝ Աննան մի քանի ամիս առաջ եկել էր ինձ մոտ՝ հոգեբանական շատ ծանր վիճակում: Իրենից հեռացել էր իր սիրած տղամարդը: Եկել էր ինձ մոտ, որ օգնեմ, թե ինչպես հետ բերի նրան: Չէր դիմանում բաժանման ցավին: Ախր խենթի պես սիրում է նրան ու հանուն նրա պատրաստ է ցանկացած զոհողության: Դե ախր չեմ մեղադրում ես էդ աղջկան: Իր սիրած տղամարդը բավականին գեղեցիկ է՝ սպորտային կազմվածքով, բարձրահասակ: Բացի դա էլ շրջապատում ու ընդհանրապես գողական աշխարհում բավականին հարգված ա: Կանայք խենթանում էդպիսի ուժեղ անհատականություն ունեցող տղամարդկանցով: Ճիշտ ա, ասում են, որ նման տղաների չեն սիրում, բայց իմ մասնագիտական փորձը ցույց ա տալիս, որ կանայք միշտ ընտրում են տղամարդկանց էդ տեսակին՝ <<վատ տղաներին>>, քանի որ նրանք հետաքրքիր են, անկանխատեսելի, ուժեղ հոգեպես ու ֆիզիկապես:

Արմենին Քնարի խոսքերը ուժեղ ցավ պատճառեցին, ու նրա ինքնավստահ շարժուձևը և դեմքի արտահայտությունը հօդս ցնդեցին: Դեմքը սկսեց կծկվել, խամրել, հայացքը սկսեց փախցնել:

Քնարն անմիջապես դա տեսավ ու հասկացավ, որ հասավ իր ուզածին: Հիմա Արմենն իր ազդեցության տակ էր գտնվում: Միայն նա կարող էր հանել իրեն այդ ծանր հոգեվիճակից:

-Հետո՞,-շփոթված հարցրեց Արմենը:

-Դե հետո էն,-ոգևորված շարունակեց Քնարը՝ տեսնելով Արմենի շփոթվածությունն ու իր խոսքերի ազդեցությունը նրա վրա,- ես նրա հետ աշխատեցի: Բայց համառ աղջիկ էր: Իմ առաջադրանքները չէր կատարում: Մի քանի անգամ գնացել ու բառիս բուն իմաստով ծնկաչոք աղաչել էր էդ տղային

Յատուկ Պոէմ

վերադառնալ: Հետո սկսեց ատել նրան, ինքնագնահատականն էլ կտրուկ ընկել էր: Նա շարունակ ինձ ասում էր, որ իր ինքնագնահատականը կվերականգնվի էն ժամանակ, երբ իրեն խենթի պես սիրահարվի մի շատ հայտնի տղամարդ: Ես ասացի, որ պետք է հրաժարվել էդ գաղափարից, քանի որ ուրիշի զգացմունքների հետ խաղալը լավ բան չէ: Բայց դե համառ աղջիկ է: Մի անգամ, երբ իր հետ աշխատում էի, քո անունը տվեց, ասեց, որ եթե դու իրեն սիրահարվես, իր

ինքնագնահատականը կբարձրանա, ու դրանով կշոյվի նրա խոցված էգոն, բայց ես արգելեցի նրան մտածել էդ մասին: Ախր ինչքան էլ չլինի դու իմ կոլեգան ես: Հետո նա էլ չեկավ ինձ մոտ, անհետացավ: Դրա համար էլ ես քեզ էսքան բան ասում եմ, որ իմանաս:

-Քնար, ճի՛շտն ասա: Ինչի՞ համար ես դու ինձ կանչել քեզ մոտ: Չեմ կարծում, թե կանչել ես սա պատմելու համար: Միայն թե չասես, որ քո սիրտը ցավում ա ինձ համար:

-Լավ, Արմեն, դեսուդեն չեմ ընկնի ու կասեմ: Ես գիտեմ, որ դու սիրահարված ես Աննային ու ուզում ես, որ նա քո կինը դառնա . . . .

-Բայց մի րոպե,-կրկին ընդհատեց Արմենը,-քեզ ո՞վ ասաց, որ ես սիրահարվել եմ նրան ու ուզում եմ, որ նա իմ կինը դառնա:

-Արմեն ջան, դու մոռանում ես, որ ես Հայաստանի լավագույն հոգեթերապևտն եմ ու կարդում եմ ցանկացած մարդու: Ո՛վ ասաց՝ քո դեմքն ասաց: Մենք՝ կանայքս, ամեն ինչ զգում ու տեսնում ենք: Կարող ես ոչինչ չասել . . . . Ես կարող եմ էնպես անել, որ ինքը սիրահարվի քեզ ու մոռանա էդ տղային:

-Բայց դու էսքան ժամանակ չես կարողացել էնպես անել, որ նա մոռանա էդ տղամարդուն, հիմա ո՞նց ես կարողանալու դա անել,-հարցրեց Արմենը՝ քմծիծաղ տալով:

-Էդ թող ինձ վրա,-հաստատակամ ասաց Քնարը:

-Բայց դու հենց էնպես դա չես անի, փոխարենը շատ թանկ գին կպահանջես դրա դիմաց,-նկատեց Արմենը:

-Արմե՛ն, քեֆս գալիս ա խելոք մարդկանց հետ գործ ունենալուց: Այո, ճիշտ ես: Գինն էն ա, որ դու պիտի հրապարակավ հայտարարես, որ այլևս չես զբաղվելու հոգեթերապևտիկ աշխատանքով ու ընդհանրապես ոչ մի հոգեբանական ծառայություն չես մատուցելու մարդկանց: Դու պիտի հեռանաս, մաքրես դաշտն ինձ համար: Հավատա, կյանքում կինն ավելի թանկ ա ու կարևոր տղամարդու համար, քան իր կարիերան: Տղամարդն իր մասնագիտական գործունեությունից չի կարա ստանա էն էներգիան,

ինչ ստանում ա սիրած կնոջից: Էնպես որ ես քեզ շատ լավ առաջարկ եմ անում՝ քեզ շահավետ առաջարկ:

Այդ առաջարկը ցնցեց Արմենին: Անմիջապես արթնացավ նրա սառը դատողությունը:

-Դու հասկանու՞մ ես, թե ի՞նչ ես առաջարկում: Քեզ էլ թվում ա, որ ես պիտի համաձայնվե՞մ, ա՛յ հիմար կին,-գոռաց Արմենը, այնուհետև վեր կացավ, արագ դուրս եկավ Քնարի աշխատասենյակից և հեռացավ գրասենյակից:

-Արմեն տղա, ծնկաչոք գալու ես ինձ մոտ ու ասես, որ համաձայն ես: Այ, հիշի՛ր իմ ասածները,-Արմենի հետևից բարկացած բացականչեց Քնարը:

***

Դուրս գալով Քնարի գրասենյակից՝ Արմենը շտապեց իր ավտոմեքենան: Նստեց, բայց որոշեց չվարել ավտոմեքենան, քանի որ շատ զայրացած էր ու հոգեբանորեն ծանր վիճակում էր:

<<Չլա դրան նայի: Կանչել ա ինձ ու տենց բան ա առաջարկում: Չէ, էս կնիկը լրիվ ցնդել ա: Իրեն թվում ա, թե իր մի երկու սուտի հոգեբանական հնարքները կարա աշխատացնի ինձ վրա: Տո դու էլ, Աննան էլ . . . Ես Հայաստանի լավագույն մասնագետն եմ: Բոլորի հոգիների ու նյարդային համակարգերի պուլտը ինձ մոտ ա . . . Արմեն, ուշքի՛ արիր: Քեզ մանիպուլացնում են: Սա կեղտոտ կանացի խաղ ա: Փաստորեն էս ամենի հետևում Քնարն ա կանգնած եղել: Նա միտումնավոր էդ կնոջն ուղարկել ա ինձ մոտ . . . . Հետո նրա

ուշացումով ու կարճ նամակները . . . . Դա նախօրոք լավ ծրագրավորված դոֆամինային ծուղակ էր ինձ համար: Լավ, ես հիմա առաջին հերթին պիտի հանգստանամ, ուշքի գամ այս հոգեբանական հարվածից: Հենց հիմա կգնամ իմ օֆիս ու էսօրվա բոլոր այցերը կչեղարկեմ: Դրա փոխարեն կնստեմ ու կաշխատեմ ինձ վրա՝ օգտագործելով իմ գիտելիքները հոգեթերապիայից: Այսօր ժամանակակից

հոգեբանությունում ու հոգեթերապիայում կան բազմաթիվ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս հաշված րոպեների ընթացքում ազատվել կնոջ հանդեպ զգացմունքային կախվածությունից, իսկ ես այդ մեթոդների կիրառման լավագույն մասնագետն եմ>>,- մտածեց, հետո ամրագոտին կապելով՝ գործի դրեց ավտոմեքենայի շարժիչն ու շարժվեց դեպի իր աշխատատեղ:

***

Արմենի գնալուց հետո Սոֆյան, հետաքրքրությունից այրվելով, մտնում է Քնարի մոտ:

-Վա՛խ, Քնար, ես լսում էի, թե ի՛նչ էիր նրան ասում,-հիացմունքով բացականչեց Սոֆյան:

-Ախ դու սատանա, փաստորեն դու մեր ամբողջ զրույցը լսել ես: Քեզնից պիտի սկսեմ զգուշանալ,-կատակեց Քնարը:

-Ախր շատ հետաքրքիր էր,-ասաց Սոֆյան ու շարունակեց,-ինձ տպավորեց էն պահը, երբ դու հորինեցիր էն գողական տղամարդու պատմությունը: Փաստորեն դու դրանով հասկացրիր, որ Աննան խելագարվում ա մեկի համար, ով ամբողջովին Արմենի հակապատկերն ա: Էդ լուրջ հարված ա տղամարդու համար: Հատկապես թույն էր էն պահը, որ ասցիր, որ աղջիկները սիրում են <<վատ տղաներին>>:

-Բայց աղջի, ճիշտ եմ ասել, տե՞նց չի:

-Չէ, օրինակ ես սիրում եմ խելոք տղաների, խուլիգան տղաներից զզվում եմ:

Յատուկ Պոէմ

-Դե պարզ ա, որ տենց ես ասելու, բայց իրականում ուրիշ ձև ես մտածում:

-Չէ, ես ուրիշ ձև չեմ մտածում: Ինձ դուր են գալիս խելոք տղաները: Ես ուրիշ հիմար կանանց նման չեմ:

-Դե լավ, աղջի, գլուխդ մի՛ գովա,-նկատեց Քնարը:

-Բայց կարծու՞մ ես, որ նա կփոշմանի ու կգա քեզ մոտ,-հարցրեց Սոֆյան:

-Ոչ թե կարծում եմ, այլ համոզված եմ,-վստահ ասաց Քնարն ու շարունակեց,-ես շատ լավ եմ ուսումնասիրել Արմենի հոգեբանական կերպարը, կռահում եմ, թե նա մանկության տարիներին ինչ հոգեբանական տրամվաներ ա ստացել: Նա խառնվածքով մելանխոլիկ ա, ինտրովերտ, ունի թույլ նյարդային համակարգ: Հենց դրա համար էլ նա ընտրել է հոգեթերապևտի մասնագիտությունը, որպեսզի կարողանա հաղթահարել իր բարդույթներն ու վախերը:

-Բայց դու որտեղի՞ց գիտես նրա վախերի ու տագնապների մասին,-հետաքրքրությամբ հարցրեց Սոֆյան:

-Դրա մասին ինձ պատմել ա իր դասախոսներից մեկը:

-Դե տարիներ ա անցել, հիմա նա կայացած տղամարդ ա ու երևի հաղթահարել ա իր վախերը,-նկատեց Սոֆյան:

-Իսկ ես հակառակումն եմ համոզված:

-Փաստորեն, ըստ քեզ, նա գալու ա ու ասի, որ համաձայն ա, որ ինքը հրաժարվի իր մասնագիտական գործունեությունից հանուն Աննայի՞,-ասաց Սոֆյան:

-Այո, հենց էդպես էլ լինելու ա:

-Բայց ինչքան էլ չլինի նա հոգեբան ա ու գիտի, թե նման դեպքերում ինչպես վարվել, ինչպես մոռանալ սիրած կնոջը,-նկատեց Սոֆյան:

-Աղջիկ ջան, քեզ թվում ա, թե ես էդքան բանը չեմ հասկանում,-բարկացավ Սոֆյայի վրա Քնարը,-կարծու՞մ ես ինձնից դու խելոք ես:

-Չէ, Քնար ջան . . .,-շփոթված ու կարկամած ասաց Սոֆյան:

-Այո, նա գիտի շատ հնարքներ կնոջ հուզական կախվածությունից ազատվելու համար ու նա դրանք կկիրառի, բայց ողջ հարցի նրբությունը նրանում ա, որ էդ հնարքները աշխատում են միայն զրո կոնտակտի դեպքում:

-Այսի՞նքն,-հետաքրքրությամբ հարցրեց Սոֆյան:

-Այսինքն էն, որ եթե կնոջը մոռանալու համար հատուկ հոգեբանական ու հոգեթերապևտիկ մանիպուլացիաներ ես անում, այդ ժամանակահատվածում դու այդ կնոջը չպետք է տեսնես, հակառակ դեպքում ողջ աշխատանքը ջուրն ա թափվում, ու ամեն ինչ պետք ա սկսել նորից,-պատասխանեց Քնարը:

-Պարզ ա: Այսինքն՝ եթե էդ ժամանակահատվածում նա տեսնի իր սիրած կնոջը, մեթոդները ոչ մի օգուտ չե՞ն տա:

-Այո, քանի որ եթե թեկուզ մի անգամ էլ նրան տեսնի, ուղեղը, այսպես ասած, կպարգևատրվի, դոֆամինի հսկայական չափաբաժին կարտազատվի: Դրանից հետո կրկին կզգա ուժեղ դոֆամինային քաղց, իսկ նրա ուղեղը գիտի, որ միայն նրա մասին մտածելով, նրա նկարները տեսնելով, նրա հետ հանդիպելով ու զրուցելով կարող ա էդ քաղցը լրացնել:

-Ես էդ մասին չգիտեի,-զարմացած ասած Սոֆյան:

-Տեսնու՞մ ես աղջի, ինչքան բան ես անվճար սովորում ինձանից: Չլա դրա փոխարեն էլ ես եմ քեզ աշխատավարձ եմ տալիս,-կատակեց Քնարը:

-Ստացվում ա, որ դու էս օրերս պիտի զանգես Աննային ու ասես, որ գնա Արմենի մոտ,-նկատեց Սոֆյան:

-Չէ, Աննան չի գնա Արմենի մոտ: Դա շատ մեծ սխալ կլինի: Տես, թե հիմա ինչ ա կատարվում: Աննայի ձգողականության ուժի հիմնական գաղտնիքներից մեկը նրա անհասանելիությունն ա Արմենի համար: Նա, երբ իմացավ, որ Արմենը զգացմունքներ ունի իր հանդեպ, հեռացավ: Նա դարձավ անհասանելի: Ես այսօր մի քանի անգամ մեծացրի Աննայի անհասանելիությունը՝ ասելով, որ նա սիրում

է այլ տղամարդու, այն էլ՝

Արմենից շատ տարբերվող: Պատկերացնու՞մ ես՝ էստեղ ի՞նչ հոգեբանական թակարդ կա: Ես Աննային կասեմ, որ էս երկու օրս էնպես անի, որ Արմենն իրեն պատահաբար տեսնի:

-Բա եթե մոտենա ու զրուցի՞ հետը,-անհամբեր հարցրեց Սոֆյան:

-Չէ, չի մոտենա: Արմենն ամաչկոտ տղամարդ ա, բացի դա էլ նա ուզում ա մոռանալ Աննային, հետևաբար ինչի՞ պիտի մոտենա նրան: Նա այդքան հիմար չի, հասկանում ա, որ եթե մոտենա, կրկին կընկնի Աննայի ծուղակը: Հետևաբար պետք ա էնպես անել, որ նա Աննային պատահաբար հանդիպի:

-Իսկ եթե Արմենը հետաքրքրվի Աննայի մասին ու իմանա նրա կյանքի վերաբերյալ ողջ ճշմարտությունը,-հարցրեց Սոֆյան:

-Չի իմանա, քանի որ Արմենը գիտի միայն նրա անունը, իսկ սոցցանցերում Աննան ջնջել ա իր անձնական կյանքի վերաբերյալ տվյալները: Դե Երևանն էլ մեծ քաղաք ա:

-Իսկ եթե, այնուամենայնիվ, իմանա,-հարցրեց Սոֆյան:

-Եթե իմանա ճշմարտությունը, մեր խաղն ավարտված ա, քանի որ Աննայի նկատմամբ հետաքրքրությունը կընկնի: Մարդու ուղեղն այնպիսին է, որ իրեն հուզում, մտահոգում, հետաքրքրում են էն բաները, ինչը ինքը չգիտի, իր համար առեղծվածային ա, բայց երբ իմանում է ողջ ինֆորմացիան, դրանով օբյեկտը կորցնում ա իր հետաքրքրությունը, ուղեղը դադարում է այլևս նրա մասին մտածելուց:

-Վա՜խ Քնար ջան, էդ ինչքան լավ բաներ գիտես: Կուզենայի քո չափ բան իմանայի,-ասաց Սոֆյան՝ հիացած Քնարի գիտելիքներից:

-Էնպես որ աղջի, երբ ընկեր ունենաս, միանգամից ամբողջ ճշմարտությունը քո մասին չպատմես: Ասա միայն դրա 10 տոկոսը, մնացածը թող ինքը փորձի պարզել: Էդ ընթացքում ինքը կփորձի հասկանալ ողջ ճշմարտությունը քո մասին

ու դա կլինի նրա ծուղակը, քանի որ ինչքան դու անհայտ լինես իրա համար, էնքան հետաքրքիր ու առեղծվածային կլինես:

***

Աշխատասենյակ վերադառնալուն պես Արմենը զանգահարում ու չեղյալ է համարում իր այդ օրվա ընդունելությունները: Հետո բազմոցին մի քիչ պառկելուց ու մարմինը հանգստացնելուց հետո, վեր է կենում, նստում աթոռին՝ սեղանի շուրջը: Վերցնում է թուղթ ու գրիչը և բարձրաձայն սկսում մտածել .

<<Էսպես, ես հիմա կհասկանամ, թե ինչու էսպես ստացվեց ինձ մոտ, ինչի՞ էմոցիոնալ կախվածություն առաջացավ ինձ մոտ դեպի էդ կինը: Մինչև ես էդ չհասկանամ, չեմ կարող էս ամենը հաղթահարել: Ուրեմն՝ նա խոսում էր ցածր ձայնով: Նա ասաց, որ հիացած ա ինձանով ու դա ասաց ցածր և հաճելի ձայնով: Ցածր և մեղմ ձայնը ուղեղի կողմից ընկալվում է որպես մտերմության և վստահության ազդանշան: Ուղեղը ստանում է հաճույքի ազդակ, ինչը ստիպում ա տղամարդուն կրկին ու կրկին ցանկանալ լսել էդ ձայն: Բացի էդ էլ գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կնոջ ցածր ձայնն ակտիվացնում ա տղամարդու պարասիմպաթիկ համակարգը: Տղամարդու ուղեղի համար կնոջ ցածր ու հաճելի ձայնը դառնում ա կենսաբանական ազդանշան, որն ասում ա՝ «դու անվտանգության մեջ ես, կարաս թուլանալ»: Էս ուժեղագույն նևրոլոգիական խարիսխ ա: Դրան գումարվում ա գեղեցիկ արտաքինն ու կարճ շրջազգեստը՝ ընդգծելով իրա գեղեցիկ ոտքերը: Ստացվում ա, որ դրանից ակտիվացել ա իմ ուղեղի հաճույքի կենտրոնները: Դրանից հետո նա հեռացավ՝ խոստանալով վաղը գալ, բայց չեկավ: Առաջացավ սպասում ու լարվածություն, իսկ ուղեղս հաճույքի իր չափաբաժինն էր ուզում: Սպասումն ու լարվածությունը կախվածություն են առաջացնում: Հետո ես գրեցի նրան ու նա պատասխանեց: Տեղի ունեցավ անսպասելի պարգևատրում, ինչու՞ անսպասելի, քանի որ ես կարծում էի, որ նա փոշմանել ա ու էլ ինձ մոտ չի գա: Դրանից հետո սկսվեց

հաղորդագրությունների ուղարկումը նրան, որը տևեց մեկ ամիս: Նա միտումնավոր ուշ էր պատասխանում, որպեսզի ինձ մոտ սպասում առաջանա, դե սպասումից էլ դոֆամին է արտադրվում: Հետո սառնություն, իսկ վերջում անսպասելի ջերմություն ու հեռացում: Նա արդեն դարձավ անհասանելի: Սա

մաքուր Քնարի ձեռագիրն ա: Նա ամեն ինչ շատ լավ էր հաշվարկել, գիտեր իմ թույլ կողմերը, ուսումնասիրել էր իմ ներաշխարհը: Հիմա ես պետք ա անեմ հետևյալ՝ ջնջեմ նամակները, սկսեմ օգտագործել հոգեթերապևտիկ մեթոդների իմ ողջ զինանոցը, էդ թվում ՆԼԾ պատկերային վարժությունները, մասնավորապես հուզական կապերի դիսոցիացիան և ռեկոնսոլիդացիան, արգելափակեմ նրա սոցիալական էջը, որպեսզի իմ մեջ մարի նրանից նամակ ստանալու հույսը, չնայեմ նրա նկարները, նրա հետ հանդիպում չփնտրեմ: Չպետք ա վերլուծեմ նրա արարքներն ու էդպես վարվելու շարժառիթները: Ամեն օր՝ 30 րոպե, պետք ա ժամանակ հատկացնեմ նրան կորցնելու ցավը զգալու ու վերապրելու համար: Էդ ամենակարևորն ա: Բացի էդ էլ պիտի սկսեմ սպորտով զբաղվել, շատ զբոսնեմ արևոտ եղանակին՝ սերոտոնինի մակարդակը բարձրացնելու համար: Բայց ախր ամբողջ խնդիրն էն ա, որ էս ամենը անելու համար ես պետք ա իմ առօրյա գործերը վեր դնեմ 1-3 ամսով, բայց նման ճոխություն ինձ թույլ տալ չեմ կարող: Ի՞նչ անեմ . . . .>>:

Հնչում է սմարթֆոնի հեռախոսազանգը .

-Ալո,-պատասխանեց Արմենը:

-Ալո, բարև Ձեզ, պարո՛ն Կարապետյան: Ձեզ մոտ այսօր ընդունելության կար՞ող ենք գրանցվել,-հարցրեց անծանոթ երիտասարդ աղջկա մի ձայն:

-Ոչ, ես այսօր ընդունելություն չեմ անում:

-Իսկ ե՞րբ կարող եմ գալ Ձեզ մոտ:

-Վաղը զանգեք ինձ, ես օր ու ժամ կնշանակեմ:

-Դե լավ:

-Բարի,-պատասխանեց Արմենը՝ ավարտելով հեռախոսազրույցը:

***

Յատուկ Պոէմ

Երևանում խորն աշուն էր: Սոֆյան, նստած զբոսայգու նստարաններից մեկում, սպասում էր Աննային: Վերջինիս հետ ժամ էր պայմանավորվել հանդիպման համար:

Նախատեսված ժամից անցել էր 10 րոպե, բայց դեռ Աննան չկար:

<<Սա ինչի՞ ա ուշանում: Իրեն ինչի՞ տեղ ա դրել: Հոգնել եմ էս ցնդած Քնարի հանձնարարությունները կատարելուց: Էդ կինը քանի գնում, էնքան խելքը քցում ա: Մարդ մի նորմալ գործ կարողանար գտնել, դրա մոտից դուրս գար: Բայց ախր հիմա չեմ կարող դուրս գալ: Խեղճ ծնողներս աղբորս պարտքերը փակելու համար վարկ են վերցրել: Եթե ես չաշխատեմ, չենք կարա ապրենք>>,-մտածում էր Սոֆյան:

-Պրիվետ,-գալիս է Աննան՝ բարձր տրամադրությամբ ողջունելով Սոֆյային:

-Բարև, ինչի՞ ուշացար,-դժգոհ ասաց Սոֆյան:

-Դու չգիտե՞ս, թե էս քաղաքում ի՞նչ պռոբկայա: Ավտոբուսն էլ մի ժամ ճանապարհ ա գալիս:

Սոֆյան պայուսակից մի ոսկեգույն ծրար հանեց ու տվեց Աննային:

-Վերցրու, էստեղ էնքան ա, ինչքան դու ու Քնարը պայմանավորվել եք: Աննան ուրախ վերցնում է ծրարը, բացում, հաշվում գումարն ու ասում:

-Ամեն ինչ տոչնի ա:

-Քնարն ասում ա , որ մի 2-3 օրից դու պետք ա նենց անես, որ փողոցում կամ չգիտեմ մի ուրիշ տեղ Արմենը պատահաբար քեզ տեսնի,-տխուր ասաց Սոֆյան:

-Փողին մունաթ, Սոֆյա ջան: Կանենք, ոնց պետք ա:

-Աննա, քեզ կարո՞ղ եմ մի հարց տալ, բայց մեր մեջ պիտի մնա, Քնարը չպիտի իմանա,-անսպասելիորեն հարցրեց Սոֆյան:

-Հարցրու,-զարմացած ու մի փոքր էլ վախեցած ասաց Աննան:

-Խիղճդ չի՞ տանջում, որ հանուն փողի էդ տղամարդու հետ տենց ես վարվում:

-Չհասկացա: Բայց ես իրեն ի՞նչ եմ արել որ: Ես իրեն հավատարմության, սիրո ու ոչ էլ ամուսնության խոստում չեմ տվել: Ինքն ա ինձ կպել: Ես ի՞նչ մեղք ունեմ, որ դա իմ վրա սիրահարվել ա: Թող չսիրահարվեր:

-Հա, էդ հասկացանք, բայց դու գիտես, որ Քնարը ցանկանում ա իրեն վնաս տա քո միջոցով:

-Ես իմ փողի տերն եմ: Էդ տղամարդու ու Քնարի հաշիվներն ինձ բացարձակապես հետաքրքիր չեն: Ես չէի պատկերացնում, որ Արմենն էդքան հարիֆ տղամարդ ա: Երբ հարցազրույցները տեսնում ես, ասում ես, էս ի՛նչ լուրջ ու հասուն ա, բայց պարզվում ա, որ իրական կյանքում ինքը թուլամորթ ու կին չտեսած տղամարդ ա:

<<Արմենը սրա մեջ ի՞նչ ա գտել, որ սիրահարվել ա: Սա ո՛չ խելք ունի, ո՛չ մակարդակ, ո՛չ էլ հոգի: Տղամարդիկ կույր են, չեն տեսնում, թե ում են սիրահարվում>>,-մտածեց Սոֆյան՝ զգալով, որ հետզհետե իր մեջ հակակրանք ու ատելություն է ձևավորվում Աննայի հանդեպ:

-Դե լավ, ես գնացի: Քնարին ասա, որ ամեն ինչ կանեմ ոնց պետք ա,-ասաց Աննան՝ վեր կենալով տեղից ու Սոֆյայից հեռանալով:

Սոֆյան չէր շտապում հեռանալ: Ընկել էր մտածմունքների մեջ: Հանկարծ զգաց, որ նախանձում է Աննային: Նախանձում է նրա համար, որ իրեն սիրահարվել է Հայաստանի ամենահայտնի, խելացի ու կրթված տղամարդկանցից մեկը, թեև նա ոչ մի արժանիք չուներ: Իսկ իրեն վաղուց է, ինչ ոչ ոք չէր նկատում: Նա ընկեր չուներ, ամուսնացած չէր, քանի որ վերջին անգամ իրեն սեր խոստովանել էին հեռավոր ուսանողական տարիներին: ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո նա ժամանակ չի ունեցել իր

կյանքը դասավորելու: Լծվել էր իրենց ընտանեկան խնդիրները լուծելուն՝ հոգ տանելով ծնողների ու թեթևամիտ եղբոր մասին:

***

Ուշ երեկո էր: Սոֆյան, պառկած իր անկողնում, սմարթֆոնն էր թերթում: Քունը չէր տանում: Մտավ Արմենի սոցիալական ցանցերի էջերը, մի պահ ուզեց հավանել նրա նկարները, բայց չարեց . վախեցավ, որ Քնարը կարող է տեսնել: Հետո մտավ նրա յութուբյան ալիքը, սկսեց դիտել Արմենի տեսանյութերը: Մարմինը սկսեց թուլանալ, ու ջերմություն զգաց: Շուտով նրան համակեց խաղաղության, անհոգության զգացումը, հետո դրան փոխարինելու եկավ հաճույքի ուժեղ զգացողությունը:

Սոֆյան երբեք իրեն այդպես լավ չէր զգացել, վերջին տարիներին այդպիսի ուժեղ դրական ու հաճելի էմոցիաներ չէր ապրել:

Առավոտյան արթնացավ: Իրեն զգում էր գերազանց, բայց և նկատեց, որ իր միտքն արդեն զբաղված էր Արմենով: Նրա պատկերն ասես գաղտագողի սողոսկել էր Սոֆյայի ուղեղի մեջ, ու դա հաճույք էր պատճառում նրան:

***

Երևանում կեսօր էր: Արմենը, դուրս գալով իր գրասենյակից, գնաց խանութ՝ իր համար ուտելու բան գնելու: Խանութից դուրս գալուց հետո հանկարծ դեմդիմաց տեսավ Աննային: Քարացավ ու շփոթվեց: Սրտի զարկերը միանգամից արագացան, զգաց ադրենալինի և դոֆամինի ուժեղ շարժ մարմնում: Աննան, ձևացնելով իբր չի նկատում Արմենին, արագ հեռացավ:

<<Գրողը տանի, էս երկու օրվա ամբողջ աշխատանքս ջուրն ընկավ: Սա լավ չէր, որ նրան տեսա: Հիմա նորից պետք ա զրոյից սկսեմ:Բայց չեմ հավատում, որ ես իրան պատահական տեսա:Երևի Քնարն ա իրան սովորեցրել, որ միտումնավոր ինձ հանդիպի: Քնարը գիտի, որ ես հիմա աշխատում եմ Աննային մոռանալու համար, հատուկ վարժություններ եմ անում: Դրա համար էլ նա էնպես արեց, որ ես իրեն հանդիպեմ: Քնարը շատ լավ գիտի, որ դա կզրոյացնի իմ ամբողջ աշխատանքը: Չգիտեմ, թե ինչի ա էդ հիմար կնոջը թվում, թե ես պետք ա իր առաջարկն ընդունեմ: Ես էդքան թուլամորթի նմա՞ն եմ>>,-ընկել էր մտածմունքների մեջ Արմենը:

Վերադարձավ իր աշխատասենյակ, հաց կերավ, սուրճ խմեց, բայց միտքն արդեն ալեկոծված էր: Ուղեղը դոֆամինի իր հսկայական չափաբաժինն էր ուզում ստանալ Աննայից: Զգաց, որ հոգին ցավում է, ցավում է ատենալի ցավով: Ասես մեկը թրով ծվատում էր մարմինը: <<Բայց կարո՞ղ ա Աննան չգիտի Քնարի մտադրությունների մասին, կարո՞ղ ա Աննան նույնպես զոհ ա էս պատմության մեջ, կարո՞ղ ա էդ տղամարդու պատմությունը սուտ ա, ու Քնարը միտումնավոր ա հորինել: Գրողը տանի ի՞նչ եմ ես անում: Ախր հայտի հոգեբանները հստակ դիրքորոշում են արտահայտել, որ կյանքում մեկին մտքիցդ հանելու համար չպետք է վերլուծես, դրանով կրկին ընկնում ես հոգեբանական ծուղակի մեջ: Չէ, ինձ հետաքրքիր չի, թե Աննան ինչ գիտի կամ ինչ չգիտի: Ես չեմ մտածի ու չեմ վերլուծի: Էդ իմ պրոբլեմը չի>>:

Արմենը նստեց ու կրկին սկսեց կիրառել իր հոգեթերապևտիկ հնարքները: Մոտ 30-40 րոպե իր վրա աշխատելուց հետո ահագին թեթևացած զգաց:

Բայց դա ժամանակավոր թեթևություն էր: Մինչև ուշ երեկո այցելուներ ընդունելով ու նրանց հետ աշխատելով, Արմենն ուժեղ հոգնածություն

զգաց: Բացի այդ էլ մոտը տրամադրության կտրուկ անկում էր, քանի որ լսել էր իր այցելուներից մեկի տխուր ու դաժան պատմությունը, ապրումակցել նրան՝ բացասական էմոցիաները վերցնելով իր վրա:

Զգաց, որ էլ չի դիմանում բացասական հույզերին: Աննան, և միայն Աննան կարող էր իրեն այդ ծանր հոգեվիճակից հաներ, բարձրացներ տրամադրությունը, կյանքը ներկեր վառ գույներով:

Վերցրեց սմարթֆոնը: Էլ չէր դիմանում: Ուզում էր զանգահարեր Քնարին ու ասեր, որ պատրաստ է ընդունել նրա պայմանները, միայն թե ստանա Աննային:

Մոտ մի րոպե սմարթֆոնը մնաց ձեռքում: Հիվանդագին ցանկությունն ականջներում աղմկում էր . <<Զանգիր Քնարին, միայն նա կարող է էնպես անել, որ դու հասնես Աննային>>:

Բայց հենց այդ վճռական պահին իր մեջ անսպասելիորեն արթնացավ տղամարդկային արժանապատվությունն ու կարգապահությունը . <<Մի րոպե, ես ի՞նչ եմ անում:Ես չպիտի տեղի տամ ուղեղիս ցանկություններին: Ուղեղս թքած ունի իմ վրա, ինքն ուզում ա իր դոֆամինի չափաբաժինը, մնացածն իրան հետաքրքիր չի: Չէ, ես չեմ անի դա: Ավելի լավ ա մեռնեմ, բայց էդ քայլին չեմ գնա>>:

***

Անցավ մեկ շաբաթ: Այդ ընթացքում Արմենը մեկ անգամ ևս տեսավ Աննային, սակայն կարողացավ իրեն տիրապետել . չմոտեցավ, նրան չգրեց ու չդիմեց Քնարին, թեև նա գերմարդկային ճիգեր էր գործադրում իրեն զսպելու համար:

Առավոտ էր: Երևանում անձրևում էր: Արմենը, տանից դուրս գալով, իր ավտոմեքենայով գնում էր գրասենյակ: Խցանումների պատճառով որոշեց այլ ճանապարհով տեղ հասնել: Անձրևը հետզհետե ուժեղանում էր: Հանկարծ կանգնառներից մեկում տեսավ Սոֆյային, որը ցրտից կուչ էր եկել ու դողում էր: Կանգնեց ու իջեցնելով դռան ապակին՝ ասաց .

-Եկեք Ձեզ տանեմ:

Սոֆյան զարմացավ, երբ տեսավ, որ Արմենն անձրևին կանգնեց ու իրեն հրավիրեց նստել ավտոմեքենան:

-Չէ, մերսի: Ուր որ ա ավտոբուսը կգա,-մերժեց Սոֆյան: Արմենն ավտոմեքենայից դուրս եկավ ու մոտեցավ Սոֆյային:

-Ավտոբուսը կարող ա ուշանա: Ես տեսնում եմ, որ Դուք մրսում եք: Եկեք տանեմ: Մի՛ մտահոգվեք, Քնարը չի իմանա, որ իմ ավտոմեքենան եք նստել:

Տեսնելով, որ Արմենը համառում է, Սոֆյան համաձայնեց ու նստեց Արմենի ավտոմեքենան:

-Ես հիմա կմիացնեմ ավտոմեքենայի փեչը, ու Դուք կտաքանաք:

Յատուկ Դոէմ

-Շատ շնորհակալ եմ,-ուրախ ասաց Սոֆյան:

-Ձեզ Քնարի օֆիս տանեմ, չէ՞:

-Հա, աշխատանքի եմ գնում . . . Իսկ Դուք որտե՞ղ եք գնում,-հետաքրքրությամբ հարցեց Սոֆյան:

-Ես էլ եմ աշխատանքի գնում,-պատասխանեց Արմենը:

-Բայց ախր Ձեր գրասենյակը քաղաքի ուրիշ կողմում ա,-նկատեց Սոֆյան:

-Գիտեմ: Պատահաբար Ձեզ ճանապարհին տեսա: Որոշեցի Ձեզ աշխատանքի հասցնել: Ձեզ հո չէի թողնելու էս անձրոտ եղանակին սպասել տրանսպորտին: Էս քաղաքային իշխանություններն էլ անընդհատ խոսում են հանրային տրասնպորտի բարեփոխումների մասին, բայց միևնույն է, կարծես ոչինչ չի փոխվում:

-Ճիշտ եք,-ասաց Սոֆյան ու շարունակեց,-բայց ես ինձ վատ եմ զգում, որ իմ պատճառով նեղություն եք քաշում:

-Սոֆյա, նեղության հարց չկա: Ես էդպես որոշեցի: Համ էլ, որ աշխատանքիս տեղը գնայի, պիտի մասնագիտական գրականություն կարդայի, որովհետև մինչև ժամը 11-ը ընդունելություն չունեմ ինձ մոտ:

Ամբողջ ճանապարհին Սոֆյան մերթընդմերթ սիրահար կնոջ աչքերով հայացք էր նետում Արմենին:

Արմենը դա նկատեց, բայց ինքը վերագրեց նրան, որ Սոֆյան շատ երախտապարտ է իրեն, որ աշխատանքի տեղ է հասցնում: Դա նա համարում էր շնորհակալության արտահայտման ձև, այլ բան նրան մտքով չէր անցնում:

Քնարի ու Աննայի մասին Արմենը ոչինչ չհարցրեց Սոֆյային, ասես նրանք գոյություն չունեին իր համար:

Յատուկ Պոէմ

Երբ հասնում էին Քնարի գրասենյակ՝ Սոֆյան խնդրեց, որ Արմենն ավտոմեքենան կանգնեցնի մոտ 50 մետր հեռու, որպեսզի Քնարը պատահաբար չտեսնի, որ նա իջնում է Արմենի ավտոմեքենայից:

Արմենը կանգնեց Սոֆյայի նշած տեղում:

-Անչափ շնորհակալ ու զգացված եմ,-ասաց Սոֆյան:

-Հաջող աշխատանքային օր եմ Ձեզ մաղթում:

Սոֆյան դուրս գալով ավտոմեքենայից ու մի քանի քայլ անելով՝ շրջվեց ու ժպտալով նայեց Արմենի ավտոմեքենայի կողմը:

Արմենին Սոֆյայի այդ արարքը տարօրինակ, բայց և միևնույն ժամանակ խորհրդավոր թվաց:

***

Անցավ 3 օր: Արմենը, թեև արժանապատվորեն դիմանում էր Աննայի հետ կապ հաստատելու մղեգին ցանկությանը, բայց, այնուհանդերձ, հասկանում էր, որ եթե այսպես շարունակվեր, իր նյարդային համակարգը տեղի կտար, ու ինքն այլևս չէր կարող իրեն զսպել: Որոշեց դիմել իր ամերիկացի գործընկերոջը՝ անվանի հոգեբան Օլիվերին, որը մասնագիտացած էր անձի կախվածությունների հաղթահարման ուղղությամբ: Օլիվերի հետ նա ծանոթացել էր արտասահմանյան սեմինաներիներից մեկին մասնակցելու ժամանակ, ու այդ օրվանից ընկերացել էին և իրար հետ կապ էին պահպանում:

Ուշ երեկոյան աշխատասենյակից տեսակապով զանգահարեց Օլիվերին: Արմենը Օլիվերին մանրամասն պատմեց ամեն ինչ: Զրույցն ընթանում էր անգլերեն լեզվով, բայց, հարգելի ընթերցող, ես այն կներկայացնեմ հայերենով:

-Հասկացա, Արմեն, թե ինչ իրավիճակում ես հայտնվել: Քո սխալն այն էր, որ ժամանակին կանգ չես առել, փոխարենը մեկ ամիս նամակագրական կապի մեջ ես եղել նրա հետ: Դրանով քեզ մոտ առաջացել է կայուն տագնապային-զգացմունքային կախվածություն: Դու պետք է հասկանայիր, որ

Յատուկ Ոճեմ

նրա կողմից քո նամակներին ուշ ու հակիրճ պատասխանելը նշանակում է այսպես ասած, դոզավորված հասանելիություն, իսկ դա առաջացնում է կախվածություն,-ասաց Օլիվերը:

-Օլիվեր, ես այդ ամենն հասկանում եմ: Խնդիրն այն է, որ արդեն տևական ժամանակ է աշխատում եմ ինձ վրա, բայց ժամանակակից մեթոդները չեն օգնում,-նկատեց Արմենը:

-Ինձ մանրամասն ասա, թե ինչ վարժություններ ու տեխնիկաներ ես գործադրել, որոնք չեն օգնել:

Արմենը սկսեց պատմել, թե ինչպես է աշխատել իր վրա ու ինչ վարժություններ է արել: Օլիվերն ուշադիր լսելուց հետո ասաց .

-Արմեն, դու ասում ես, որ եթե Աննային երկու անգամ չտեսնեիր քո՝ վարժությունների կատարման ժամանակ, ապա հաստատ դու նրան

մոռացած կլինեիր: Դու կարծում ես, որ դա է եղել պատճառը, որ քեզ մոտ չի ստացվում նրան <<բաց թողնել>>: Բայց ես քեզ կասեմ, որ ամեն ինչ չէ, որ այդքան պարզ է:

-Ի՞նչ ես ուզում ասել դրանով,-հարցրեց Արմենը:

-Ես, ինչպես հասկացա, դու ամեն օր մշտական ժամանակ չես տրամադրել սգալու Աննայից մերժված լինելու ու նրան կորցնելու վիշտը: Դու պետք է ամբողջովին ու ողջ ուժգնությամբ ապրես այդ ցավը: Գիտեմ, շատ դժվար է: Շատ տղամարդիկ, փոխանակ զգալու ու ապրելու ցավը, սկսում են զուր հույսեր փայփայել, որ նրանք կհասնեն իրենց սիրած էակին, միտքն ու երևակայությունը սկսում է պատկերացնել իրենց ապագա հանդիպումները, ջերմ խոսքերը: Բայց սա ընդամենը ենթագիտակցականի խաղն է: Սրանով ուղեղը պաշտպանվում է, որպեսզի ցավ չապրի: Այսքան տարի ես աշխատում եմ, ու ինձ մոտ եկել են բազմաթիվ տղամարդիկ, որոնք մերժվել են կամ նրանցից կինը հեռացել է: Ու հետաքրքիրը գիտե՞ս՝ ինչն է: Բոլորն էլ վստահ են, որ իրենց սիրած կինը մտքափոխվելու է ու վերադառնալու: Դե այդպես հեշտ է ուղեղի համար: Ուղեղը

չի ուզում ցավ զգալ: Բայց եթե մարդը ցանկանում է բուժվել, պետք է զգա կորստի ու մերժման ցավը: Սա է գաղտնիքը: Այնպես որ, Արմեն, դու ամեն օր 30-40 րոպե տրամադրիր այդ ցավը ողջ հոգով ու մարմնով զգալու համար:

-Ճիշտ ես, Օլիվեր, բայց ախր իմ օրն այնքան հագեցած է, որ հետո հոգնում եմ ու հոգնած ժամանակ էլ ցավ վերապրեմ, արդեն հնարավոր չէ,-ասաց Արմենը:

-Հասկանում եմ Արմեն, դու շատ լավ ես արել, որ ջնջել ես ձեր նամակները, արգելափակել նրա սոցիալական էջերը, բայց վատն այն է, որ նրան երկու անգամ տեսել ես: Դու այսուհետև պետք է այնպես անես, որ նրան չհանդիպես:

-Բայց ինչպե՞ս անեմ, եթե այդ կինը միտումնավոր այնպես է անում, որ ես իրեն հանդիպեմ,-հարցրեց Արմենը:

-Արմեն, դա հեշտ լուծելի հարց է: Մի ամսով քաղաքից դուրս արիր: Գնա արտասահման կամ Հայաստանի հեռավոր անկյուններից մեկը: Այդպես նա քեզ հաստատ չի գտնի:

-Օլիվեր, դա հնարավոր չէ: Ես հազար գործ ունեմ: Եթե ես մի ամիս չաշխատեմ, ֆինանսական խնդիրների առջև կկանգնեմ: Ես քեզ զանգահարել եմ, որպեսզի իմանամ, թե կա՞ արդյոք ավելի արդյունավետ ու արագ աշխատող վարժություն: Չ՞է որ դու այդ ոլորտի լավագուն մասնագետներից մեկն ես:

-Արմեն, ներկա պահին լավագույնը Լյուսի Բրաունի և Հելեն Ֆիշերի, ինչպես նաև Ռոյ Բաումայստերի առաջարկած վարժություններն ու խորհուրդներն են: Դրանք են՝ առաջինը՝ ամբողջովին դադարեցնել կոնտակտը՝ ոչ մի զանգ, ոչ մի նկարի դիտում, ոչ մի նամակ: Երկրորդը՝ ամբողջովին վերապրել մերժման ու կորստի ցավը: Երրորդ՝ գտնել ուղեղի համար նոր դոֆամինային աղբյուրներ, օրինակ, նոր նպատակներ դնել, նոր մասնագիտություն սովորել, մտածել կյանքդ ավելի հարմարավետ ու որակյալ դարձնելու մասին: Չորրորդ՝ ընտրել քեզ առաջին հերթին: Սա նշանակում է քեզ տալ այն ամենը, ինչի կարիքը դու ունես, կենտրոնանալ քո նվաճումների ու հաջողությունների վրա:

-Չգիտեմ, թե ինչու ինձ մոտ այդպես ուժեղ զգացմունքային կախվածություն առաջացավ դեպի այդ կինը:

-Բրիտանացի հոգեվերլուծաբան Ջոն Բոուլբին, ով բոլորիս քաջ հայտնի <<Կապվածության տեսության>> ստեղծողն է, ասում էր, որ եթե մանկության տարիներին մոր կամ խնամակալի հետ կապը եղել է անկայուն կամ անապահով, հասուն տարիքում մարդը հակված է ձևավորել տագնապային և զգացմունքային առումով խիստ կախյալ հարաբերություններ: Եթե մայրը մեկ հոգատար է եղել, մեկ՝ սառը կամ անհասանելի, երեխան չի հասկացել, թե երբ կստանա սեր: Նա սովորել է անդադար «կառչած» մնալ մորից, որպեսզի բաց չթողնի ուշադրության պահը: Այս երեխաները մեծանալով դառնում են զուգընկերոջից խիստ կախյալ: Նրանք ունենում են զուգընկերոջը կորցնելու մշտական, կպչուն վախ, պահանջում են սիրո անդադար

ապացույցներ, պատրաստ են զոհաբերել սեփական կարիքները, միայն թե իրենց չլքեն: Նրանց թվում է, թե առանց զուգընկերոջ իրենք գոյություն ունենալ չեն կարող, ճիշտ այնպես, ինչպես մանկության տարիներին առանց մոր:

-Օլիվեր, քեզ հետ լիովին համամիտ եմ, բայց այստեղ մի ծուղակ էլ կա, որի հանդեպ պետք է շատ ուշադիր լինել: Խոսքը Զեյգարնիկի էֆեկտի մասին է: Ես չգիտեմ իրականությունն այդ կնոջ մասին, չգիտեմ նրա սիրտը զբաղվա՞ծ է, նախկինում ամուսանացա՞ծ է եղել, երեխա կամ երեխաներ ունի՞ կամ, թե ինչու՞ է նա մտել այդ խաղի մեջ, ի՞նչն է նրան ստիպել: Այս բոլորը շարունակ պտտվում են իմ մտքում ու ինձ հանգիստ չեն տալիս: Դու գիտես, որ երբ պատմությունը կյանքում կամ հարաբերություններում մնում է կիսատ ու անորոշ, Զեյգարնիկի էֆեկտն աշխատում է իր ամենացավոտ ու տանջալից ձևով: Չէ՞ որ մարդու ուղեղը բնույթով ձգտում է ամբողջականության, կայունության և հստակության, ու ցանկացած անորոշություն ընկալվում է որպես ներքին տագնապի աղբյուր,-ասաց Արմենը:

-Գիտեմ, Արմեն: Երբ հարաբերություններն ընդհատվում են առանց վերջնական խոսքի, ապա մարդու ուղեղում այդ պատմությունը մնում է «ակտիվ» կարգավիճակում: Ուղեղը շարունակում է ֆոնային ռեժիմով էներգիա և հոգեկան ռեսուրս ծախսել՝ փորձելով վերլուծել, հասկանալ պատճառները և գտնել

տրամաբանական ավարտ: Սա նման է համակարգչի, որտեղ միաժամանակ բաց են տասնյակ ծանր ծրագրեր: Արդյունքում համակարգիչը դանդաղում է, իսկ դու զգում ես քրոնիկ հոգնածություն:

-Ես այս դեպքում ունեմ երկու ճանապարհ: Կա՛մ պարզել ճշմարտությունը, կա՛մ էլ երևակայության մեջ հորինել պատմության ավարտի սցենարը, բայց ես գտնում եմ, որ ամենաճիշտ տարբերակը պատմությունը երևակայության մեջ ավարտելն է, երբ դու ինքդ ես հորինում ավարտի սցենարը,-նկատեց Արմենը:

-Շատ ճիշտ ես կարծում, քանի որ եթե փորձես պարզել իրականությունը, այն կարող է շատ ցավոտ լինել ու նոր հոգեկան տրամվա առաջացնել, իսկ դու դեռ այս մեկից չես կարողացել ազատվել: Դրա համար պետք է անես հետևյալը: Եթե այդ կնոջը հարցեր ունես տալու կամ չասված խոսքեր ունես իրեն ասելու, ապա վերցրու թուղթ ու գրիչն ու նրան նամակ գրիր: Բայց այդ նամակը նրան չես ուղարկում, այլ գրելուց հետո պատռում ու դեն ես նետում կամ այրում ես: Ինչ վերաբերում է ճշմարտությունն իմանալուն, ապա երևակայությանդ մեջ հորինիր քո ուզած ճշմարտությունը, քո ուզած ավարտի սցենարը, այն պտտիր մտքումդ ամեն օր: Եթե փակ աչքերով վիզուալիզացնես դա, շատ ավելի արագ ու լավ արդյունք կստանաս:

-Օլիվեր, շատ շնորհակալ եմ: Էլի հարցեր ունեմ քեզ տալու, բայց շատ լավ հասկանում եմ, որ զբաղված մարդ ես ու երկար ինձ հետ խոսել չես կարող: Շնորհակալ եմ, որ քո խիստ հագեցած աշխատանքային գրաֆիկում կարողացար ժամանակ գտնել ինձ համար,-գոհունակությամբ ասաց Արմենը:

-Արմեն, դու իմ ընկերն ես: Ես միշտ պատրաստ եմ քեզ օգնել: Վերջում մի բան էլ եմ ուզում ասել: Փորձիր հասկանալ այն, որ եթե այդ կինը կողքիդ լինի, հետ վերադառնա, դու ի՞նչ էմոցիաներ կունենաս, ի՞նչ զգացում կապրես: Ավելի պարզ ասած՝ փորձիր հասկանալ, թե այդ կինը ի՞նչ էմոցիա է ասոցացնում քեզ մոտ: Երբ կստանաս այդ հարցի պատասխանը, դու ինքդ քո մեջ բացիր այդ էմոցիայի աղբյուրը, ինքդ քեզ տուր այդ էմոցիան,-ասաց Օլիվերը:

-Շատ շնորհակալ եմ, Օլիվե՛ր: Անպայման կհետևեմ քո խորհուրդներին,-ասաց Արմենը:

-Արմեն, դու ինձ մի 20-30 օրից նորից զանգահարիր, տեսնեմ, թե ի՞նչ արդյունքի ես հասել:

-Շատ լավ, պայմանավորվեցինք:

-Դե լավ, ցտեսություն, Արմեն:

-Ցտեսություն, Օլիվեր:

Օլիվերի հետ զրուցելուց հետո Արմենը իրեն շատ լավ ու ինքնավստահ զգաց: Կար մեկը, ով պատրաստ էր իրեն օգներ և թև ու թիկունք կանգներ նեղ պահին: Դա ցանկացած մարդու համար խիստ կարևոր է:

Նստեց համակարգչի առաջ՝ մտնելով իր սոցիական ցանցերն ու յութուբյան ալիքը:

Տեսավ, որ ակնհայտ կեղծ ինչ-որ մի օգտատեր իրեն փառաբանող մեկնաբանություններ էր գրել իր գրառումների ու հրապարակումների, ինչպես նաև յութուբյան տեսանյութերի տակ: Մեղմ ժպիտ անցավ Արմենի դեմքով: Հասկացավ, թե դա ով է:

***

Առավոտյան ժամը 10:00 էր: Քնարը եկել էր իր աշխատասենյակ, բայց տրամադրություն չուներ: Նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, որ Արմենը չէր հանձնվում, չէր գալիս իր մոտ՝ ընդունելու առաջարկը:

<<Բայց խի էսպես ստացվեց: Արմենը պիտի որ չդիմանար: Նա ուժեղ տղամարդ չի: Էդ ես շատ լավ գիտեմ: Բայց ո՞նց ա կարողանում նա դիմանա: Ախր նա ոչինչ չգիտի Աննայի մասին, չիմացավ, թե Աննան խի ա իր հետ տենց վարվել, ի՞նչն ա նրան ստիպել, չգիտի, թե նրա սիրտը զբաղվա՞ծ ա, թե չէ: Նա հիմար չի, հասկանում ա, որ ես իրեն էն տղամարդու հետ կապված պատմությունը հորինել եմ: Ու ես դեպքում պիտի աշխատի Զեյգարնիկի էֆեկտն իր ողջ ուժով: Զեյգարնիկի էֆեկտը հզոր մեխանիզմն ա: Նա շատ տղամարդկանց ու կանանց ա ծնկի բերել, էս դեպքում դրան գումարվում ա

Յատուկ Դոէմ

Աննայի անհասանելիությունն ու նրա մերժումը: Մերժում, որն արտահայտվում ա լռությամբ, իսկ նման մերժումն ավելի մեծ

հոգեբանական ազդեցություն ա թողնում: Չէ, ես նրան ծնկի կբերեմ: Նա երկար չի դիմանա: Անգամ երկաթյա կամքի ուժը նրան չի փրկի>>,-մտքերի մեջ էր խորասուզվել Քնարը:

Ներս է մտնում Սոֆյան:

-Քնար, այցելուն եկել ա, ներս կանչե՞մ:

-Չիմի ես աշխատելու հավես չունեմ: Լավ չեմ զգում: Ուղարկիր տուն: Ասա թող երկու օրից գա,-լարված ասաց Քնարը:

-Բայց Քնար: Ախր այդ մարդը նախօրոք հերթագրված էր: Հետո էլ ինքը լուրջ կին ա, կվիրավորվի,-ասաց Սոֆյան:

-Աղջի, քեզ էլ թվում ա ես էլ անլուրջն եմ, հա՛: Ով ուզում ա լինի: Քեզ չեմ ասել, որ ինձ համար հեղինակություններ չկան: Էստեղ ես եմ հեղինակությունն ու որոշողը: Պետք լինի այցելուներն օրերով էլ կսպասեն: Դե ի՛նչ ես սառել, գնա, դրան տուն ուղարկիր,-գոռաց Քնարը:

Սոֆյան վախեցած դուրս եկավ Քնարի աշխատասենյակից:

<<Չէ, ես պետք ա վճռական հարված հասցնեմ: Էս անգամ հաստատ չի դիմանա ու ծնկաչոք կգա ինձ մոտ: Բայց ի՞նչ անեմ: Շատ հզոր կոմբինացիա պիտի մտածեմ: Նախ՝ պիտի էնպես անեմ, որ Արմենը հայտնվի ուժեղ դեպրեսիոն հոգեվիճակում, հետո պիտի օգտագործվի էնպիսի հզոր տրիգեր, որը կարթնացնի նրա մեջ որսորդին, կստիպի իր ինքագնահատականը բարձրացնելու համար նվաճել Աննայի սիրտը>>,-մտածեց Քնարը:

Հետո նրա գլխում մի միտք փայլատակեց, սկսեց ժպտալ ու բարձր ձայնով կանչեց .

-Սոֆյա, շտապ ինձ մոտ արի:

Յատուկ Դոէմ

***

Ժամը 21:40 էր: Արմենը տանն էր ու համակարգչով հաղորդում էր դիտում: Զանգահարում են:

-Ալո,-պատասխանելով հեռախոսազանգին՝ ասաց Արմենը:

-Ալո բարև Ձեզ,- լսափողի մյուս կողմից լսվեց կնոջ մի ձայն: Արմենը ձայնից իմացավ, թե ով էր իրեն զանգահարողը՝ Սոֆյան էր:

-Բարև Ձեզ, Սոֆյա: Ինչ որ բա՞ն է պատահել:

-Չէ, Արմեն: Բան չի պատահել: Պարզապես ես պետք է Ձեզ կարևոր բան ասեմ,-ասաց Սոֆյան:

-Դե ասա Սոֆյա, լսում եմ:

-Չէ, դա հեռախոսի բան չի:

-Լավ, արի էսպես պայմանավորվենք: Ես վաղը առավոտյան զբաղված եմ լինելու, բայց երեկոյան կողմը կարող եմ գալ Քնարի գրասենյակի կողմերը, Ձեզ վերցնել ու ավտոյով տուն տանել: Էդ ընթացքում էլ կխոսնեք: Հիմա ասեք, թե Ձեր աշխատանքը ո՞ր ժամին է ավարտվում, ո՞ր ժամին գամ,-հարցրեց Արմենը:

-Ես ժամը 17:50 սահմաններում արդեն դուրս եմ գալիս օֆիսից: Դուք կարո՞ղ եք էդ ժամին ինձ սպասել քիչ հեռու գտնվող կանգառում:

-Այո, իհարկե կարող եմ: Ես էդ ժամին Ձեր ասած տեղում կլինեմ:

-Շատ շնորհակալ եմ,- ուրախ ասաց Սոֆյան:

-Դե ուրեմն պայմանավորվեցինք, բարի գիշեր,-ասաց Արմենը:

-Բարի գիշեր:

***

Յատուկ Ոդեմ

Արմենն ավտոմեքենայի մեջ պայմանավորված ժամին սպասում էր Սոֆյային: Շուտով գալիս է Սոֆյան ու նստում Արմենի ավտոմեքենան: Այդ օրը Արմենի համար նա առանձնահատուկ գեղեցիկ էր դարձել . գնացել էր գեղեցկության սրահ, հարդարել վարսերը, դիմափոշի քսել դեմքին, պճնվել:

-Բարձ Ձեզ, Արմեն, երկա՞ր սպասեցիք ինձ,-ուրախ ու ոգևորված նստելով Արմենի ավտոմեքենան՝ հարցրեց Սոֆյան:

-Չէ, Սոֆյա, ջան, նոր էի եկել,-պատասխանեց Արմենն ու դեմքով դառնալով Սոֆյան՝ հարցրեց,-ուզու՞մ ես մի տեղ գնանք, սուրճ խմենք:

-Չէ, չեմ կարող, ծնողներս ինձ են սպասում,-զարմացած, բայց և միևնույն ժամանակ երջանկացած այդ առաջարկից՝ պատասխանեց Սոֆյան:

-Դե լավ, ոնց կասես: Կտանեմ Ձեզ տուն:

-Արմեն, ես ուզում եմ Ձեզ կարևոր բան ասել:

-Ասա, Սոֆյա, լսում եմ:

-Խոսքը Քնարի ու Աննայի մասին ա . . .

-Սոֆյա, խնդրում եմ ինձ մոտ դրանց անունները մի՛ տուր: Իրենք ինձ հետաքրքիր չեն,-հաստատակամ ասաց Արմենը:

-Ախր Քնարը նոր թակարդ ա ուզում լարել Ձեր դեմ,-մտահոգված ասաց Սոֆյան:

-Ինչ ուզում ա իմ դեմ լարի, մեկ ա իր էժանագին տրյուկներն ինձ մոտ չեն անցնում: Դու ավելի լավ ա պատմիր ինձ քո մասին մինչև տեղ կհասնենք: Ես ոնց տեսնում եմ երկար ենք գնալու էս պոռբկաների պատճառով:

Սոֆյան ներքուստ ուրախ էր, որ այդ պահին խցանում էր, քանի որ դա նրան հնարավորություն էր տալիս ավելի շատ ժամանակ լինել Արմենի հետ:

-Դե, ոչինչ Արմեն ջան, համբերատար եղիր: Ես չեմ շտապում, բայց եթե Դուք շտապ գործեր ունեք, կարող եք ինձ իջեցնել, ես ավտոբուսով տուն կհասնեմ:

-Ի՞նչ եք ասում, Սոֆյա, ես ո՞նց կարող եմ Ձեզ իջեցնել ու թույլ տալ, որ ավտոբուսով գնաք: Նախ՝ ես ոչ մի տեղ չեմ շտապում, երկրորդ՝ եթե անգամ շտապ գործեր էլ ունենայի, միևնույն է՝ Ձեզ տուն էի տանելու:

-Շատ շնորհակալ եմ Ձեզանից,-ժպտալով ու ակնդետ նայելով Արմենին՝ ասաց Սոֆյան:

-Սոֆյա, մի բան կարո՞ղ եմ խնդրել քեզանից:

-Այո, իհարկե:

-Ինձ հետ <<Դուք>>-ով մի խոսա: Ուզում եմ, որ մենք անմիջական զրուցենք:

-Շատ լավ,-ամոթխած, բայց ներքուստ շատ գոհ ասաց Սոֆյան:

Խցանումն ավարտվեց, ու ճանապարհն արդեն ազատ էր: Գիշերային Երևանը վառվել էր լույսերով:

-Սոֆյա մի հարց եմ ուզում տալ, բայց պետք է անկեղծ պատասխանես,-անսպասելի ասաց Արմենը:

-Հարցրեք,-ասաց Սոֆյան՝ միաժամանակ փոքր-ինչ վախենալով ու անսպասելիի գալով:

-Ինչու՞ ես ինձ օգնում: Ախր դու Քնարի օգնականն ես: Եթե Քնարն իմանա, քեզ աշխատանքից կազատի,-հետաքրքրությամբ հարցրեց Արմենը:

Սոֆյան լռեց . չգիտեր՝ ինչ պատասխաներ: Արմենի այդ հարցը նեղը գցեց նրան: Սոֆյան չէր կարող Արմենին ասել, որ օգնում է, քանի որ զգացմունքներ ունի նրա հանդեպ:

Արմենը հասկացավ, որ իր հարցով նեղը գցեց Սոֆյային ու որպեսզի վերջինս իրեն վատ չզգա, ասաց .

-Ես գիտեմ, թե ինչու՞ ես ինձ օգնում: Պատճառը շատ պարզ ա: Դու շատ լավ անձնավորություն ես: Դու չես հանդուրժում անարդարությունը, կեղծիքը, խարդավանքը, անգամ էն դեպքում, երբ դու Քնարից կախված ես: Ուզու՞մ ես քեզ համար ես այլ աշխատանք գտնեմ: Ինչքան էլ չլինի, ես մեծ կապեր ունեմ: Ինձ մոտ շատ ազդեցիկ ու հզոր մարդիկ են գալիս, ու ես իրենց օգնում եմ հաղթահարել իրենց անձնական խնդիրները:

-Այո, ուզում եմ,-ժպտալով ասաց Սոֆյան:

-Ի՞նչ կրթություն ունեք, որտե՞ղ եք աշխատել,-հարցրեց Արմենը:

-Ավարտել եմ Երևանի Պետական Համալսարանի

<<Հոգեբանություն>> բաժինը, բակալավր եմ: Համալասարանն ավարտելուց հետո հոգեբան եմ աշխատել մանկապարտեզում մի քանի տարի, հետո կարդալով Քնարի հայտարարությունը, հարցազրույցի եմ եկել նրա մոտ: Նա ինձ աշխատանքի վերցրեց ու լավ էլ վարձատրում է:

-Պարզ ա:

Լռություն տիրեց: Մոտ հինգ րոպե ոչ ոք չէր ցանկանում խախտել լռությունը: Լռություն,որն ավելի խոսուն էր, քան ցանկացած բառ:

<<Արմենին Աննան ոնց որ չի հետաքրքրում: Բայց կարող ա ինձ մոտ ա տենց ցույց տալիս, բայց իրականում դեռ չի կարողացել դրան իր մտքից հանի: Ո՞նց ստուգեմ, ո՞նց>>,-մտածում էր Սոֆյան:

<<Էս աղջիկը տարված ա ինձանով: Դա տեսնելու համար պետք չի հոգեբան, առավել ևս հոգեթերապևտ լինել: Ինքը լավ անձնավորություն ա ու անկեղծ ա ինձ հետ: Իմ պատճառով մեծ

զոհողության ա գնում: Չգիտեմ, ոնց անեմ, որ նրան չնեղացնեմ>>,-իր հերթին մտածում էր Արմենը:

-Սոֆյա, հասանք քո ասած հասցեն, ո՞ր շենքն ա, ցու՛յց տուր:

Սոֆյան ցույց տվեց իրենց շենքը: Ավտոմեքենան հասավ ու կանգնեց շենքի մոտ: Սոֆյան դուրս գալուց առաջ պայուսակից հանեց մի թղթի կտոր ու տալով Արմենին՝ ասաց .

-Էստեղ Աննայի հեռախոսի համարն ա: Եթե ուզում ես նրա հետ խոսել, հարցեր տալ, պարզաբանումներ ստանալ, զանգիր իրեն:

Արմենը ցնցվեց Սոֆյայի այդ քայլից:

Սոֆյան իջավ ավտոմեքենայից ու հրաժեշտ տալով Արմենին՝ շտապեց տուն:

Արմենը, ձեռքում պահած Աննայի հեռախոսահամարը, ապշել էր Սոֆյայի արարքից:

<<Չեմ հասկանում, եթե ինքը զգացմունքներ ունի իմ հանդեպ, ինչի՞ Աննայի համարն ինձ տվեց: Իր ձեռով ինձ հանձնեց Աննային: Կարո՞ղ ա ես սխալվել եմ, ու Սոֆյան ոչ մի զգացմունք էլ չունի իմ հանդեպ, հակառակ դեպքում նա այդ քայլը երբեք չէր անի: Բայց ախր նրա հայացքը, աչքերը . . . չէ, ես չէի կարող էդպես կոպիտ սխալվել: Բայց ինչու՞ նա արեց այս քայլը . . . Է՛, էս կանանցից բան չեմ հասկանում>>:

Արմենը տարակուսած գնաց տուն:

***

Ուշ երեկո էր: Արմենը, միայնակ իր սենյակում նստած, աշխատում էր իր վրա՝ առօրյա լարվածությունից ու սթրեսներից ազատվելու

համար: Թուղթը, որի վրա գրված էր Աննայի հեռախոսահամարը, դրել էր սեղանին:

Ձեռքը տարավ այդ թուղթը, նորից տեսավ հեռախոսահամարն ու հենց այդ պահին զգաց, որ կարող է ստանալ իր բոլոր հարցերի պատասխանները՝ զանգահարելով Աննային: Բայց, չգիտես ինչու, նա չէր ցանկանում զանգահարել: Զգաց, որ այլևս Աննան նրան չի հետաքրքրում, նրա պատկերը

սկսեց մարել իր գլխում: Աննան այլևս անհասանելի չէր, Արմենը կարող էր ցանկացած պահին նրա հետ կապ հաստատել: Արմենի բազմաթիվ հոգեբանական վարժություններն այդքան արդյունավետ չեղան, որքան այդ թղթի կտորը, որ տվել էր նրան Սոֆյան: Նա այլևս ոչինչ չէր ուզում պարզել: Աննան այլևս սկսեց նրան չհետաքրքրել: Դրա փոխարեն նրան հանգիստ չէր տալիս այն միտքը, թե ինչու Սոֆյան այդպես վարվեց: Նա հոգու խորքում ցանկանում էր, որ Սոֆյան իր հանդեպ հետաքրքրված լիներ, քանի որ ցանկացած մարդու համար հաճելի է, որ կամ մեկը, ով անտարբեր չէ քո հանդեպ, կա մեկը, ով մտածում է քո մասին, կա մեկը, որի մտքերը զբաղված են միայն քեզանով:

Բայց Սոֆյայի այդ քայլը կասկած էր մտցրել նրա հոգու մեջ, կասկած, որը որդի պես հետզհետե սկսում էր կրծել հոգին:

***

Մինչ Արմենը մտատանջությունների մեջ էր, Սոֆյան իր տեղը չէր գտնում:

<<Բայց ճի՞շտ էր, որ ես էդ քայլն արեցի: Բա որ զանգի Աննային ու նրա նկատմամբ զգացմունքներն ավելի խորանան: Ո՞նց իմանամ զանգել ա, թե՝ չէ>>:

Վերցրեց սմարթֆոնն ու վերսկսեց իր զրույցը արհեստական բանականության հետ: Բանն այն է, որ Սոֆյան այդ քայլին գնացել էր դրա խորհրդով: Նա իր առօրյայի հետ կապված բոլոր հարցերը քննարկում էր իր թվային զրուցակցի հետ: Նրան պատմել էր Քնարի արարքների, Արմենի և նրա հանդեպ տածած զգացմունքների մասին:

Նա երկար ժամանակ սմարթֆոնով գրում էր արհեստական բանականությանը: Հարգելի՛ ընթերցող, ստորև կներկայացնենք նրա նամակագրությունից մի հատված:

<<Բարև: Ես արեցի այդ քայլը, ինչպես դու էիր խորհուրդ տվել: Բայց շատ անհանգիստ եմ, բա ո՞ր Արմենը զանգի Աննային>>,-ուղարկում է հաղորդագրությունը:

Ստացվում է պատասխանը .

<<Դու հերոսական քայլ ես կատարել: Նախ՝ ապացուցեցիր ինքդ քեզ, որ քո համար կարևորը որոշակիություն է, երկրորդ՝ Արմենի համար Աննան այլևս անհասանելի չէ: Աննայի անհասանելիությունն այն կեռիկներից մեկն էր, որ պահում էր հոգեբանորեն կախված Արմենին, և երրորդ՝ ամենակարևորը՝ Արմենը կսկսի կասկածել, որ դու զգացմունքներ ունես իր հանդեպ, քանի որ սիրող կինը այդ քայլին չէր գնա: Մինչ այդ նա գլխի էր ընկել, որ դու հետաքրքրված ես իրենով: Քո այս քայլով դու նրա մեջ մեծ կասկած զցեցիր: Սա նրան կստիպի ակամայից մտածել քո մասին, իսկ ինչքան շատ մտածի նա քո մասին, այնքան լավ քեզ համար>>:

<<Ես ո՞նց իմանամ, թե նա Աննային զանգել է, թե՝ ոչ: Ախր անորոշությունից մեռնում եմ: Զանգե՞մ նրան ու հարցնեմ այդ մասին>>,-ուղարկեց նոր հաղորդագրություն Սոֆյան:

<<Ոչ, չի կարելի նման բան անել: Դրանով դու ցույց կտաս քո թուլությունը: Արմենն իսկույն գլխի կընկնի, որ քեզ այդ հարցն անհանգստացնում է: Դու պետք է կատարյալ սառնասրտություն դրսևորես՝ ոչ մի զանգ ու ոչ մի նամակ: Նա թող մտածի, թե քեզ համար միևնույնն է՝ ինքը կզանգահարի Աննային, թե՝ ոչ>>,-ստացվեց պատասխանը:

<<Իսկ դու ի՞նչ ես կարծում, նա կզանգահարի Աննային>>,-ուղարկեց հարցը Սոֆյան:

<<Ամենայն հավանականությամբ՝ ոչ: Չի զանգահարի: Գիտակցական մակարդակում Արմենը չի հավանում այդ կնոջը, քանի որ նա համագործակցում է իր ախոյանի հետ ու փորձում է վնասել իրեն: Աննայի հանդեպ Արմենն ունի հոգեբանական ու զգացմունքային կախվածություն ու դրա առաջացման պատճառներից մեկը Աննայի անհասանելիությունն էր: Այժմ Արմենի ուղեղը ֆիքսեց, որ Աննան այլևս իր համար անհասանելի չէ, ու նման դեպքերում կատարվում է մի զարմանալի բան՝ հենց որ անհասանելիությունը վերանում է և այլևս ջանք գործադրելու կարիք չի լինում, կենսաբանական հետաքրքրությունը կտրուկ ընկնում է, քանի որ ուղեղը հաճույք է ստանում սպասումից, որոնումից և անհայտի բացահայտման պրոցեսից>>,-ստացվեց պատասխանը:

<<Դու ասում ես, որ իմ քայլով Արմենի մեջ կասկած ընկավ: Մինչև այդ նա վստահ էր, որ ես զգացմունքներ ունեմ իր հանդեպ: Հիմա արդեն նա կսկսի կասկածել ու կփորձի պարզել ճշմարտությունը>>:

<<Միանշանակ, դու պետք է այնպես անես, որ դա վերածվի Արմենի համար իսկական գլուխկոտրուկի: Դրա համար այլևս ոչ մի զանգ, ոչ մի նամակ: Թող ավելի խորանան նրա մեջ կասկածները>>,-ստացվեց պատասխանը:

***

Քնարը մտավ իր գրասենյակից ոչ հեռու գտնվող խանութը, որտեղից հաճախ գնումներ էր կատարում, որպեսզի սուրճ ու քաղցրավենիք գնի:

-Բարև, Արուս տոտա, ո՞նց ես,-ողջունեց վաճառողուհուն Քնարը, որին վաղուց ճանաչում էր ու հետը մտերմիկ զրուցում:

-Լավ եմ Քնար ջան, դու ո՞նց ես:

-Գերազանց,-ոգևորված պատասխանեց Քնարը:

-Բա խի՞ ես էսօր դու եկել, Սոֆյան ու՞ր ա,-հետաքրքրությամբ հարցրեց Արուսը:

-Մեր գեղեցկուհին էս պահին կարևոր գործի վրայա, չուզեցի գործից կտրել:

-Յա՛, վերջերս էդ մեր գեղեցկուհին կարևոր գործերի մեջ ա,-խորհրդավոր տոնով բացականչեց Արուսը:

-Ի՞նչ նկատի ունես, Արուս տոտա, բա՞ն կա, որ ես չգիտեմ,-զարմացած ու հետաքրքված հարցրեց Քնարը:

-Սոֆյան ընկե՞ր ունի,-հարցրեց Արուսը:

-Չէ, չունի, եթե ունենար, ես կիմանայի:

-Քնար, բա էն սպիտակ ջիպով տղամարդը ո՞վ ա:

Յատուկ Պոէմ

-Ի՞նչ սպիտակ ջիպ, ի՞նչ տղամարդ: Չլա պատմի՛ր, Արուս տոտա:

-Ուրեմն լսիր: Մի քանի օր առաջ տեսնում եմ Սոֆյային՝ գեղեցիկ հագնված, զուգված: Մեկ էլ տեսա, որ տուն գնալիս գնաց ու սուսուփուս կանգառի մոտ իրեն սպասող մի սպիտակ ջիպ

նստեց:Դե հո պատահական մարդու ավտո չէր նստելու: Ուրեմն զանգել ու պայմանավորվել էին չէ՞ որ պիտի գա իրեն գործից տանի: Բացի էդ ես Սոֆյային մի անգամ էլ եմ տեսել էդ նույն ավտոյի մեջ: Էդ օրը անձրև էր գալիս: Տեսա, որ էդ նույն ավտոն կանգեց ձեր օֆիսից մի 50-70 մետր հեռու: Սոֆյան իջավ: Չա, լավ եմ հիշում հենց էդ նույն ավտոն էր:

-Չաստատ Սոֆյա՞ն էր, Արուս տոտա,-չհավատալով ու կասկածելով հարցրեց Քնարը:

-Աղջի հա: Ճիշտ ա, ես պառավ կնիկ եմ, բայց խելքս էլ ա տեղը, աչքերս էլ լավ են տեսնում,-փոքր-ինչ բարկացած ասաց Արուսը:

-Ավտոյի ռույլին կարող ա՞ կին էր նստած,-հարցրեց Քնարը:

-Չէ, տղամարդ էր, տղամարդ,-վստահ ասաց Արուսը:

-Արտաքինը կարո՞ղ ես նկարագրել:

-Ես հեռվից եմ տեսել, ճիշտն ասած, ուշադրություն չեմ դարձրել դեմքին, միայն հաստատ գիտեմ, որ տղամարդ էր:

-Լավ, Արուս տոտա, մերսի ինֆոյի համար: Ջդաչին չեմ ուզում, քեզ պահիր,-ասաց Քնարը:

Արուսը շատ ուրախացավ, որ Քնարը հետ չվերցրեց 730 դրամ մանրը:

Գնումներն անել վերջացնելով՝ Քնարը մտահոգ դուրս եկավ խանութից:

<<Տենաս էդ տղամարդը սպիտակ ավտոյով ո՞վ ա: Սոֆյան ընկեր չունի, թե չէ ես կիմանայի, նման ավտո ունեցող բարեկամ էլ չունի: Իրա բարեկամները

քյասիբ մարդիկ են, ինչպես ինքն ու իր ընտանիքը: Մի րոպե . . . . Արմենի ավտոն էլ ա սպիտակ ջիպ . . . . Չէ, էդ հնարավոր չի: Սոֆյան չէր նստի Արմենի ավտոն, ինձնից կվախենար, հետո էլ Արմենը խի՞ պիտի գար իրեն գործից տաներ: Բայց մի րոպե Քնար, պրիմիտիվ ես մտածում: Հնարավոր ա, որ

Արմենը որոշել ա Սոֆյայի ուղեղը լվանա ու նրան որպես գործիք իմ դեմ օգտագործի: Հա, սա հնարավոր տարբերակ ա ու լագիչնի ա: Արմենին ինֆորմացիա ա պետք, թե՛ Աննայի, թե՛ իմ պլանների ու մտադրությունների մասին: Ու էդ ամենը ինքը կարա ստանա Սոֆյայի միջոցով: Ա՛խ, Սոֆյա աղջիկ, ումից, բայց քեզանից սենց դավաճանություն չէի սպասում . . . >>:

***

Քնարը Սոֆյայից ծածկուկ մտավ գրասենյակ, սմարթֆոնը դրեց միջանցքի պահարանի մեջ, հետո մտավ իր աշխատասենյակն ու կանչեց Սոֆյային .

-Սոֆյա, մի րոպեով կգա՞ս:

-Հա, Քնար, ի՞նչ ա պատահել,-ներս մտնելով Քնարի աշխատասենյակ՝ հարցրեց Սոֆյան:

-Սոֆյա ջան հեռախոսս չեմ հիշում որտեղ եմ դրել, մի հատ կզանգե՞ս, տենամ ուր ա:

Սոֆյան վերցրեց իր սմարթֆոնն ու զանգահարեց Քնարի հեռախոսահամարին: Միջանցքում լսվեց Քնարի սմարթֆոնի հեռախոսազանգը:

-Հլա, հեռախոսդ տուր իմ ականջով լսեմ, թե զանգ գնու՞մ ա:

-Քնար, հեռախոսիդ զանգը միջանցքից ա գալիս,-ասաց ու ոչինչ չկասկածելով իր սմարթֆոնը տվեց Քնարին:

-Հա, զանգը գնում ա,-սմարթֆոնը ականջին պահելով՝ ասաց Քնարը:

Յատուկ Դրէմ

-Մի րոպե գնամ բերեմ, ես լսում եմ թե զանգը որտեղից ա գալիս,-ասաց Սոֆյան ու դուրս եկավ սենյակից՝ սմարթֆոնը պահելով Քնարի ձեռքում:

Քնարը, տեսնելով, որ Սոֆյան դուրս եկավ, անմիջապես բացեց սմարթֆոնի ելքային ու մուտքային զանգերի բաժինը և այնտեղ ճանաչեց Արմենի հեռախոսահամարը . Սոֆյան զանգահարել էր նրան:

Քնարը բարկությունից կարմրեց: Նրա կասկածները հաստատվեցին:

-Քնար, ես գտա քո հեռախոսը: Չգիտեմ խի, պահարանի մեջ էիր դրել,-ներս մտնելով՝ ասաց Սոֆյան՝ Քնարին տալով նրա սմարթֆոնը:

-Մերսի Սոֆյա ջան,-ասաց Քնարը՝ իրեն պահելով այնպես, ասես ոչինչ էլ չէր եղել:

Սոֆյան դուրս եկավ ու Քնարը, գլուխը դնելով սեղանին, մտածմունքների մեջ ընկավ:

<<Սոֆյա աղջիկ, էս խի՞ դու ինձ հետ սենց վարվեցիր: Միակ մարդն էիր մնացել կյանքումս, որ ինձ չէր դավաճանել: Ու հիմա . . . : Չգիտեմ քեզ հետ ոնց վարվեմ: Ներս եմ ուզում քեզ հիմա դուրս շպրտել իմ օֆիսից, բայց չեմ կարողանում, էդքան ուժեղ չեմ: Եթե դու էլ գնաս, ես ամբողջովին մենակ կմնամ: Ամուսինս սաղ օրը սիրուհիների հետ ֆոֆռում ա, ես էլ ստիպված իր փողերի համար աչք եմ փակում: Ծնողներս մահացել են, ես երեխա ունենալ չեմ կարող: Ամուսինս սաղ օրը էդ ա երեսովս տալիս: Սոֆյան միակ մարդ ա, ով միշտ իմ կողքին ա եղել էս տարիներին, վատ ու լավ պահերին: Նա միակ մարդն ա, ում վրա ես իշխանություն ունեմ, նա միշտ ինձ հնազանդ լսել ա, ու դա ինձ հաճույք ա պատճառել: Եթե Սոֆյան իմ կյանքից հեռանա, ես չգիտեմ, թե ինչպես կապրեմ: Ախր նրա հետ կապվել եմ: Էս ամենի մեղավորը Արմենն ա: Չերիք չի, կլենտներիս փախցնում ա, հիմա էլ աշխատողիս ա ուզում իմ ձեռքից տանի: Արմեն, ես քեզ կոչնչացնեմ . . . >>:

***

Յատուկ Դրէմ

Երեկոյան ժամը 19:30-ն էր: Քնարը հոգնած վերադառնում է տուն: Նա ապրում էր շքեղ ու հարմարավետ առանձնատանը, որը գնել էր ամուսինը՝ Արսենը, ով հիսուն տարեկան, միջահասակ, մորուքավոր տղամարդ էր: Վերջինս գործարար էր ու մեծ կարողության տեր:

Մտնելով տուն՝ տեսնում է ամուսնուն՝ բազմած ընդունարանի բազմոցին:

-Էսօր ի՞նչ կա, որ շուտ ես եկել,-անտարբեր հարցրեց Քնարը:

-Էդ երբվանի՞ց ա քեզ հետաքրքրում իմ շուտ տուն գալը,-արհամարհանքով հարցին հարցով պատասխանեց Արսենը:

-Չաց կերե՞լ ես:

-Բա հո սոված տուն չէի գալու: Դու չգիտես՞, որ ես քո էփած ճաշերը չեմ ուտում:

-Դե իհարկե, դու հավանում ես քո սիրուհիների էփած ճաշերը,-բղավեց Քնարը:

-Լսիր աղջի,-հանգիստ տոնով ու սպառնալից հայացքով նայելով Քնարին՝ ասաց Արսենը,- մյուս անգամ չհամարձակվես ինձ վրա ձենդ բարձրացնես: Էղա՞վ: Հիշիր, առանց ինձ ու առանց իմ փողերի, դու ոչ մի բան ես, ոչնչություն:

-Հերիք ա քո փողերով երեսովս տաս:

-Երեսով չեմ տալիս: Ճիշտն եմ ասում: Մոռացե՞լ ես, թե լրագրողներին, հեռուստատեսություններին ինչքան փող եմ տվել, որ քեզ իրենց մոտ հյուր հարցազրույցի կանչեն, փիառ անեն քեզ: Մոռացե՞լ ես, որ էդ քո հոգեբանական կենտրոնը պահելու ծախսերը ես եմ հոգում: Քո կլետներից ստացած փողը ըսկի հերիք չի անում էդ օֆիսի վարձը, կոմունալներն ու աշխատողներիդ աշխատավարձը տալ: Քո էդ հոգեբանական սուտի օֆիսը միշտ մինուսով ա աշխատել: Ես որ չլինեի, դու վաղուց կորած էիր: Էլ չեմ ասում, թե ինչքան փող եմ տալիս, որ դու արտասահմանում սեմինարների մասնակցես: Բայց ոչ մի օգուտ: Քո կլենտները ոնց քիչ եղել են, էնպես էլ քիչ կան հիմա: Ոչ մի առաջընթաց:

-Արսեն, դու իմ ամուսինն ես ու պետք ա ինձ թև ու թիկունք կանգնես,-մեղմ ու հաշտվողական ձայնի տոնով ասաց Քնարը:

-Լսիր, ես կրակը չեմ ընգել, որ քո մարդն եմ: Փողերս հերիք կերար,-բարկացած ասաց Արսենը:

Քնարը մոտեցավ ամուսնուն, գրկեց ուսերը, շոյեց գլուխը:

-Սիրելիս, հանգստացիր:

Արսենը, ազատվելով Քնարի գրկախառնությունից, ասաց .

-Աղջի, չլինի՞ էլի փող ա պետք, որ սենց բաներ ես անում:

-Ինչու՞ էդպես Արսեն ջան, ախր շատ կոպիտ ես:

-Աղջի, ես քո հավեսը չունեմ: Թե փող ա պետք ասա, մեյմունություններ մի՛ արա:

-Էս պահին ոչինչ էլ պետք չի: Արսենը ծիծաղելով ասաց .

-Ասածիդ մեջ բանալի բառը <<էս պահինն ա>> . . . Լավ, ես գնացի ննջասենյակ հանգստանամ: Ուզում եմ մենակ լինել: Կգաս մոտս էն ժամանակ, երբ քնած կլինեմ: Ջահլա չունեմ ռոժդ տենալու:

Այս ամենն ասելով՝ Արսենը գնաց ննջասենյակ:

<<Ոնց եմ զզվում քեզանից, գիտես փող ունես, կնոջդ հետ ոնց ուզես տենց էլ կարաս վարվես: Փողը չլինի, դու ոչինչ չես ներկայացնում քեզանից: Վաղուց ա, ինչ քեզանից ամուսնական սեր, հոգատարություն, քնքշանք չեմ տեսել>>,-մտածեց Քնարն ու գնաց խոհանոց:

Նյարդերը թուլացնելու համար կոնյակ լցրեց բաժակն ու կում-կում խմեց:

Հետո վերցրեց սմարթֆոնն ու զանգահարեց Արմենին:

-Ալո, Արմեն, բարի երեկո:

Յատուկ Դոէմ

-Բարև, Քնար,-պատասխանեց հեռախոսազանգին Արմենը՝ ասելով,-հիմա՛ ինչի ես զանգել, ի՞նչ ես ուզում:

-Զանգել եմ՝ տենամ կոլեգաս ո՞նց ա:

-Դու ինձ ի՞նչ կոլեգա: Քնար, ասելիքդ ասա, ես ժամանակ չունեմ . . .

.

-Սոֆյայի հետ հանդիպումները ինչպե՞ս են անցնում,-հարցրեց Քնարը:

Արմենն անսպասելիի եկավ Քնարի հարցից: Մի պահ շփոթվեց ու լռեց:

-Չ՛ը, Արմեն, խոսա, քեզ հարց տվի:

-Ոնց տեսնում եմ, դու լավ էլ տեղյակ ես: Էլ ի՞նչ ես ուզում իմանալ:

-Իհարկե, ես ամեն ինչից տեղյակ եմ: Ավելին՝ ես եմ նրան սովորեցրել, թե քեզ մոտ ոնց իրեն պահի ու ինչ քեզ ասի:

Արմենի գլխին ասես սառը ջուր լցրեցին:

<<Ուրեմն էս ամենը խաղ էր: Սոֆյան ձևացնում էր, իսկ ես խաբնվեցի>>,մտածեց Արմենը:

-Արմեն, ինչի՞ ես լռում մի բան ասա,-ոգևորված Արմենի շփոթվածությունից՝ ասաց Քնարը:

-Քնար, նորից եմ կրկնում, ինչի՞ ես զանգել, ի՞նչ ես ուզում,-բարկացած հարցրեց Արսենը:

-Դու շատ լավ էլ գիտես, թե ես ինչ եմ ուզում:

-Հիմա էլ Սոֆյայի՞ն ես օգտագործում քո կեղտոտ խաղերի համար,-հարցրեց Արմենը:

Յատուկ Պոէմ

-Արմեն, ինչու՞ ես էդպիսի բաներ ասում: Ես էդքան էլ վատ կին չեմ, ինչքան դու ես մտածում:

Արմենը, չցանկանալով այլևս լսել Քնարին, անջատեց հեռախոսը:

Քնարը ժպտաց: Նրան հաճույք պատճառեց Արմենի շփոթվածությունն ու բարկությունը:

***

Անցավ մի քանի օր: Այդ ընթացքում Սոֆյան մի քանի անգամ զանգահարեց Արմենին, բայց Արմենն նրա հեռախոսազանգերին չէր պատասխանում: Սոֆյան սկսում է մտածել, որ այդ ամենի պատճառը Աննան է: Հավանաբար Արմենը զանգահարել է Աննային ու էլի տարվել նրանով:

Քնարը սկսել էր Սոֆյային այլևս չվստահել ու իր ծրագրերի մասին նրան ոչինչ չէր ասում:

Երևանում հերթական աշնանային առավոտն էր: Քնարն աշխատում էր իր աշխատասենյակում: Ներս է մտնում Սոֆյան .

-Բարի լույս, Քնար, ո՞նց ես:

-Լավ եմ, Սոֆյա, դու ո՞նց ես: Լսիր աղջի, էս մի քանի օր ա հեչ տրամադրություն չունես, գունատվել ես, չլինի՞ հիվանդացել ես,-հարցրեց Քնարը՝ ձևացնելով իբր ոչինչ չգիտի:

-Չէ, Քնար, ամեն ինչ նորմալ ա: Լսիր, Արմենից ի՞նչ կա: Նա Աննայի հետ կապվե՞լ ա,-հետաքրքրությամբ հարցրեց Սոֆյան:

-Չէ, նա Աննայի հետ չի կապվել: Էստեղ էլ չեկավ, որ ինձ խնդրի: Ստացվում ա, որ ես սխալվել եմ Աննայի հարցում: Պիտի ավելի գեղեցիկ աղջիկ ընտրեի:

Քնարի այս խոսքերից Սոֆյայի դեմքը պայծառացավ, մեղմ ժպտաց:

-Բա հիմա ի՞նչ ես մտադիր անել,-հարցրեց Սոֆյան:

Յատուկ Պոէմ

-Չգիտեմ: Միայն մի բան կասեմ, որ նրան հասարակ ու աղքատ ընտանիքից աղջիկը չի կարա հետաքրքի:

Քնարի այս խոսքերից Սոֆյան կարմրեց, դեմքի մկանները կծկվեցին:

Նկատելով Սոֆյայի դեմքի արտահայտությունը՝ Քնարը շարունակեց:

-Սոֆյա, Արմենի նման տղամարդիկ հետաքրքվում են էն կանանցով, որոնք ստատուսով կամ հավասար են իրեն, կամ բարձր են իրենից: Դե դա մենակ Արմենին չի վերաբերում: Բոլոր մարդիկ էլ տենց են: Եթե դիմացինդ քեզնից ցածր ա, նա քեզ երբեք չի կարա հետաքրքի: Ճի՞շտ չեմ:

-Ճիշտ ես, Քնար,-մի կերպ թաքցնելով հուզմունքն ու շփոթվածությունը՝ համաձայնեց Սոֆյան:

Քնարը վեր կացավ, մոտեցավ Սոֆյային ու բռնելով նրա ափերը՝ ասաց .

-Լսի, սիրելիս: Լավ նորություն ունեմ քեզ համար: Հունվարի 1-ից աշխատավարձդ հիսուն տոկոսով բարձրացնելու եմ:

-Լու՞րջ,-ուրախ բացականչեց Սոֆյան:

-Իհարկե, կյանքս: Հիմա գնա պատրաստվիր՝ միասին դուրս ենք գալիս հագուստի խանութ քո համար նոր զգեստներ առնենք: Փողը ես եմ տալիս: Դա կլինի նվեր իմ կողմից:

Սոֆյան ուրախությունից գրկեց Քնարին:

Քնարը ձեռքի ափով շոյեց Սոֆյայի դեմքն ու ասաց .

-Դե գնա պատրաստվիր, հեսա դուրս կգանք:

Սոֆյան դուրս եկավ Քնարի աշխատասենյակից: Քնարն ինքնագոհ ժպտալով մտածում էր .

Յատուկ Դոեմ

<<Արմեն տղա, քեզ թվում ա, որ Սոֆյային կարաս ինձնից տանես: Չէ, ես դա երբեք թույլ չեմ տա>>:

***

Երեկո էր: Քնարը, նստած երևանյան սրճարաններից մեկում, մարդու էր սպասում:

Շուտով նրան է մոտենում ու կողքին նստում գլուխն ամբողջովին սափրած, մարմնի տարբեր մասերում դաջվածքներ ունեցող, նիհար կազմվածքով մոտ քսանհինգ տարեկան երիտասարդ:

-Բարև Ձեզ,-ողջունեց երիտասարդը՝ Քնարի կողքին նստելուց հետո:

-Բարև: Ինձ ասել են, որ Դուք շատ լավ մասնագետ եք արհեստական բանականության միջոցով վիդեոներ սարքելու գործում:

-Հա, կա տենց բան,-գլուխը ոգևորված թափահարելով՝ պատասխանեց երիտասարդը:

-Ձեր անունն ի՞նչ է,-հարցրեց Քնարը:

-Իմ գործում անուններ չկան: Ասեք ինձ Սերոբ:

-Շատ լավ, Սերոբ: Ես պատվեր ունեմ քեզ տալու ու շատ փող կտամ, եթե իմ ուզածն անես:

-Ասա, թե կոնկրետ ի՛նչ պիտի անեմ:

-Պիտի արհեստական բանականության միջոցով սարքես մի էնպիսի վիդեո, որտեղ երևա, որ հոգեթերապևտն իր կին այցելուին հիպնոսի է ենթարկում ու այդ ժամանակ, երբ վերջինս ոչինչ չի հասկանում, նրա հետ սեռական հարաբերություն է ունենում: Իսկ, երբ կինը հիպնոսից դուրս է գալիս, չի հիշում, թե իր հետ ինչ ա կատարվել: Դրանից հետո էդ վիդեոն պետք ա դնես ինտերնետում:

-Ստոպ, ես էդպիսի գործեր չեմ անում: Էդ շատ վտանգավոր ա: Եթե ես էդ վիդեոն տարածեմ, էդ մարդու հանդեպ քրեական գործ կհարուցվի, միլիցեքը քննություն կսկսեն, փորձաքննություն ա, բան ա, ու էստեղ կպարզվի, որ էդ վիդեոն սարքած ա, կեղծ ա: Հետո ման կգան էն մարդուն, ով վիդեոն տեղադրել ա ինտերնետում: Եթե ճարեն էդ մարդուն, հաստատ կդատեն: Կներես, բայց ես բերդ նստելու ցանկություն չունեմ:

-Դու էլ ենց արա, որ ոչ ոք չկարողանա պարզել, թե ով ա վիդեոն տեղադրել ինտերնետում: Ախր ինձ ասել են, որ դու տենց գործերում Հայաստանի լավագույն մասնագետներից մեկն ես,-նկատեց Քնարը:

-Բայց էդ մարդուն կդատեն: Ես չեմ ուզում, որ իմ պատճառով անմեղ մարդ գնա նստի,-ասաց Սերոբը:

-Լսիր, Սերոբ, ոչ մի անմեղ մարդ էլ չի նստի: Դու չասացի՞ր, որ էդ վիդեոն փորձաքննության կենթարկեն, իսկ եթե փորձաքննության ենթարկեն, կպարզվի, որ էդ վիդեոն սարքած ա, ու էդ մարդուն ոչինչ էլ չի լինի,-ասաց Քնարը:

-Ճիշտ ես, բա էդ դեպքում քո օգուտը ո՞րն ա, դու ի՞նչ ես ստանում էս ամենից,-զարմացած հարցրեց Սերոբը:

-Իմ ուզածն էն ա, որ էդ վիդեոն ամբողջ Հայաստանում մեծ աղմուկ հանի ու էդ մարդն ամբողջ երկրով մեկ խայտառակվի:

-Պարզ ա, էդ կկազմակերպենք: Հիմա ասա, թե ո՞վ ա էդ մարդը: Քնարը Սերոբի ականջին շշնջաց Արմենի անունը:

-Պարզ ա: Ուզում եք Ձեր մրցակցին հանել ասպարեզից: Կկազմակերպենք, բայց էդ Ձեզ վրա շատ թանկ կնստի:

-Ինչքա՞ն:

Սերոբը սեղանից անձեռոցիկ վերցրեց, գրպանից գրիչ հանեց ու անձեռոցիկի վրա ինչ-որ բան գրելով՝ տվեց Քնարին:

Յատուկ Ոռեմ

Քնարը, տեսնելով գրվածը, բացականչեց .

-Տղա՛ ջան, էս ուզում ես միանգամից հարստանա՞լ: Դու հասկանու՞մ ես, թե սա ինչ թիվ ա:

-Տիկին ջան, բա դու հասկանու՞մ ես, թե ես ի՞նչ ռիսկի տակ եմ դնում ինձ: Բա որ իմանան, որ էս վիդեոն ես եմ ինտերնետ գցողը:

-Էդ քո պրոբլեմն ա,-դժգոհ ասաց Քնարը:

-Ես գիտեմ, որ դա իմ պրոբլեմն ա, դրա համար էլ էս գինն ա: Եթե համաձայնես, կանեմ, եթե չէ՝ հաջողություն,-ասաց Սերոբը՝ վեր կենալով տեղից ու պատրաստվելով գնալ:

-Մի րոպե, սպասիր, համաձայն եմ, բայց փողը հետո կտամ:

-Փողի հարցում ռասկլադը սենց ա: Կեսը նախօրոք եք տալու, որ գործը սկսեմ, կեսն էլ գործի ավարտից հետո:

-Համաձայն եմ,-ասաց Քնարը:

-Դե որ համաձայն ես, երբ փողի կեսը կտաս, գործը կսկսեմ անել, իսկ մյուս կեսն էլ կտաս գործի ավարտից հետո:

-Պայմանավորվեցինք:

-Դե որ պայմանավորվեցինք, վերցրու էս հեռախոսը: Սրա մեջ հենց մի համար կա: Երբ ուզենաս ինձ հետ կապնվել, էս հեռախոսով սրա մեջի համարին կզանգես,-ասաց Սերոբը գրպանից հանելով մի հասարակ ստեղներով, հին բջջային հեռախոս ու տվեց Քնարին:

***

Անցնում է քսանհինգ օր: Այդ օրերի ընթացքում Քնարի պատվերով Սերոբը տեղադրում է տեսանյութը համացանցում: Ողջ Հայաստանում մեծ աղմուկ է բարձրանում: Սոցիալական ցանցերում պահանջում են կախաղան հանել

Արմենին: ՀՀ Քննչական կոմիտեն քրեական վարույթ է նախաձեռնում: Փորձաքննությամբ պարզվում է, որ տեսանյութը ստեղծված է արհեստական բանականության միջոցով: ՀՀ Քննչական կոմիտեն իր պաշտոնական համացանցային էջում հաղորդագրություն է տարածում այն մասին, որ տեսանյութն իրական չէ և ստեղծված է արհեստական բանականության միջոցով: Միաժամանակ հայտնում է, որ միջոցներ են ձեռնարկվում տեսանյութը համացանցում տեղադրողի անձը պարզելու ուղղությամբ: Սակայն այդ հաղորդագրությունը հասարակության համար աննկատ է մնում: Հասարակությունը կայացրել էր իր որոշումը՝ Արմենը հրեշ է:

Արմենը գլխի է ընկնում, որ այդ գործում Քնարի մատը խառն է, բայց դա չէր կարող ապացուցել: Քննիչին նա ասում է իր կասկածների մասին, բայց վարույթն իրականացնող մարմինը այդ վարկածը հաստատելու համար չի կարողանում բավարար ապացույցներ ձեռք բերել: Ավելին՝ ՀՀ իրավապահ մարմիններն այդպես էլ չեն կարողանում պարզել համացանցում տեսանյութը տեղադրողի ինքնությունը:

Այդ ընթացքում Արմենի մասնագիտական գործունեությանը մեծ հարված է հասցվում: Իր մոտ այցելող հաճախորդները հրաժարվում են Արմենի ծառայություններից: Նոր այցելուներ էլ չեն գալիս:

Սոֆյան, հակառակ բոլորի, չի հավատում, որ Արմենը մեղավոր է ու շարունակում է մտածել նրա մասին: Բայց միևնույն ժամանակ Սոֆյայի մտքով անգամ չէր անցնում, որ այդ ամենի հետևում Քնարն է կանգնած:

Արմենն սկսում է ողջ հոգով ատել Քնարին ու նրա հետ կապված ամեն ինչ, բացի Սոֆյայից: Ինքն էլ չէր կարողանում բացատրել, թե ինչու է շարունակում մտածել նրա մասին: Արմենի սիրտն ասում էր, որ Քնարն այդ ամենը Սոֆյայից թաքուն էր արել: Զգում էր, որ Սոֆյայի հեռախոսազանգերին չի պատասխանել այն ժամանակ, բայց և իր մեջ չէր կարողանում ուժ գտնել նրան զանգահարելու, որովհետև չգիտեր՝ ինչ ասեր, բացի այդ էլ շատ էր վախենում, որ Սոֆյան իրեն չի լսի:

***

Երեկո էր, Երևանում անձրև էր տեղում: Սոֆյան, փակված իր սենյակում, պատուհանից դուրս էր նայում, ասես ուզում էր այնտեղ տեսնել Արմենի տեսլիքը: Հոգին ցավում էր, սիրտը ծանրացել էր, կոկորդում խեղդոցի զգացողություն կար: Նա ամեն ինչ անում էր Արմենին մոռանալու համար, բայց ոչինչ չէր ստացվում: Հասկանում էր, որ Արմենն իրեն էլ չի զանգահարի, բայց սիրտը համառ երեխայի պես սպասում էր:

Հեռացավ պատուհանից, վերցրեց սմարթֆոնն ու սկսեց թերթել սոցիալական ցանցի էջերը: Հանկարծ այնտեղ մի հետաքրքիր տեսանյութ նրա ուշադրությունը գրավեց: Դա հատուկ մեդիտացիա

էր, որն արվում էր, որպեսզի սիրած մարդը իր հետ կապ հաստատի: Սոֆյան, իհարկե, նման բաների նախկինում չէր հավատում, բայց այս անգամ նա պատրաստ էր հավատալ ամեն ինչի, միայն թե իր սրտում վառ պահեր Արմենի վերադառնալու հույսը:

Տեսանյութն ուշադիր դիտելուց հետո, նա սմարթֆոնը մի կողմ դրեց, հարմար տեղավորվեց աթոռին, փակեց աչքերն ու սկսեց մեդիտացիա անել: Նպատակն այն էր, որ մեդիտացիայից հետո Արմենն իրեն զանգահարեր:

Հարգելի՛ ընթերցող, այժմ տեղափոխվենք Արմենի մոտ:

Այդ պահին Արմենն ավտոմեքենայով աշխատավայրից տուն էր վերադառնում: Չէր կարողանում կենտրոնանալ ավտոմեքենան վարելու վրա . հասկանում էր, որ ուր որ է ինքնատիրապետումը կկորցնի: Պատճառն այն էր, որ արդեն շաբաթից ավելի էր, ինչ նա չէր դադարում Սոֆյայի մասին մտածելուց: Այդ ընթացքում նա չի էլ փորձել Սոֆյային մոռանալ, չի դիմել իր հոգեբանական ու հոգեթերապևտիկ վարժություններին ու հնարքներին: Չէր ցանկանում մոռանալ Սոֆյային, քանի որ հենց միայն հիշողությունները Սոֆյայի մասին իր հոգին ու սիրտը ջերմացնում էին իր համար այդ ծանր իրավիճակում: Իրավիճակ, որտեղ թվում էր, թե ամեն ինչ փուլ է գալիս, ու էլ ոչինչ հնարավոր չէ անել: Հիշում էր Սոֆյայի հայացքը, երբ իրեն նայում էր ավտոմեքենայում, հիշում էր այն պահը, երբ Սոֆյան, իջնելով իր ավտոմեքենայից, հետ նայեց՝ երջանիկ ժպտալով:

Հարմար տեղ գտնելով՝ ավտոմեքենան կանգնեցրեց, բայց շարժիչը չանջատեց: Անձրևը մեղմ թակում էր ավտոմեքենայի դռների ապակիները: Արտասվում էր երկինքը, արտասվում էր նաև Արմենի հոգին:

Երկմտելով ձեռքը տարավ սմարթֆոնը: Զգաց, որ վախենում էր: Դա անսովոր ու անբացատրելի վախ էր:

<<Չէ, ինչ ուզում ա լինի, ես պիտի զանգեմ Սոֆյային: Էլ չեմ դիմանում էսպես>>,-մտածեց ու հավաքեց Սոֆյայի հեռախոսահամարը:

Հարգելի ընթերցող, այժմ կրկին վերադառնանք Սոֆյայի մոտ ու տեսնենք, թե նա ինչ է անում:

Սոֆյան ավարտել էր մեդիտացիան ու անսովոր խաղաղություն էր զգում: Հնչում է սմարթֆոնի հեռախոսանգը: Սոֆյայի սրտում ասես պայթուն տեղի ունեցավ: Տեսնելով սմարթֆոնի էկրանին տպված Արմենի հեռախոսահամարը՝ աչքերին չհավատաց, թվաց, թե երազում է, և ուր որ է՝ կարթնանար: Բայց դա երազ չէր: Հեռախոսազանգի ձայնը շարունակվում էր լսվել: Սոֆյան պատասխանեց հեռախոսազանգին .

-Ալո:

Արմենը մի քանի վայրկյան լռեց: Դա սովորական լռություն չէր, այլ լռություն, որն ավելի խոսուն էր, քան ցանկացած բառ:

-Ալո, Սոֆյա, բարի երեկո, Արմենն է,-կմկմալով մի կերպ ասաց Արմենը:

-Բարև Ձեզ, Արմեն, ինչու՞ եք զանգել:

Սոֆյայի կտրուկ ու հստակ հարցից Արմենն ավելի շփոթվեց, բայց հավաքելով իրեն՝ ասաց .

-Սոֆյա, ես զանգել եմ, որ ներողություն խնդրեմ էն բանի համար, որ քո հեռախոսազանգերին չեմ պատասխանել: Քնարն ինձ ասել էր, որ դու ամեն ինչ արել ես իր ցուցումով: Ես էլ զայրացած էի քո վրա:

-Քնարը շատ բան կարար ասեր, բայց Դուք տղամարդ եք, կարո՞ղ էիք չէ զանգել կամ գալ ինձ մոտ, ինձնից ճշտեիք, փոխարենը նախընտրել էիք վախկոտի պես հեռանալ:

-Ընդունում եմ իմ սխալը: Սոֆյա՛, արի հանդիպենք, խնդրում եմ . . .

-Ինչի՞ համար,-հարցրեց Սոֆյան:

-Ուզում եմ Ձեր աչքերի մեջ նայելով՝ ներողություն խնդրել ու Ձեզ շատ կարևոր բան ասել,-ասաց Արմենը:

-Մենք խոսելու ոչինչ չունենք:

-Ոչ, ունենք: Խնդրում եմ հնարավորություն տուր ինձ բացատրել: Շատ եմ խնդրում, ընդամենը մեկ հնարավորություն:

-Լավ, Արմեն, ես կտամ Ձեզ այդ հնարավորությունը,-երկար հուզական լռություն պահելուց հետո ասաց Սոֆյան,-վաղը ինձ զանգիր ու ես կասեմ հանդիպման ժամն ու վայրը:

-Շատ շնորհակալ եմ,-ուրախ ասաց Արմենը:

-Ցտեսություն:

Սոֆյայի տրամադրությունը ակնթարթորեն կտրուկ բարձրացավ: Չէր հիշում, թե մեկ էլ ե՛րբ էր իրեն այդպես երջանիկ զգացել:

<<Նա ինձ խնդրեց: Անհավատալի ա: Առաջ ինձ վերևից էր նայում, ուշադրություն չէր դարձնում, բայց էսօր նա ինձ անկեղծ խնդրեց, շատ խնդրեց>>:

Դա մտածելուց Սոֆյայի ուղեղը մեծ պարգևատրում ստացավ: Դեռևս դոֆամինի այդպիսի հսկա չափաբաժին նա երբևէ չէր ստացել:

***

Արմենն ու Սոֆյան հանդիպում են: Արմենը Սոֆյային սիրո խոստովանություն է անում և ասում, որ իր նպատակներն առավել քան լուրջ են: Սոֆյան համաձայնվում է:

Անցնում է մի քանի օր: Դեկտեմբեր ամսվա վերջին օրերն էին: Երևանը, զարդարված Ամանորի գալուստն ավետող լույսերով, յուրահատուկ փայլ էր ստացել:

Սոֆյան ու Արմենը երեկոյան զբոսնում էին:

-Սոֆյա, դու Քնարի մոտից աշխատանքի ազատման դիմումը գրել ես, չէ՞,-հարցրեց Արմենը:

-Հա, բա ոնց: Էրեգ եմ գրել:

-Ինքը դա ո՞նց ընդունեց,-հետաքրքրությամբ հարցրեց Արմենը:

-Ձևացրեց իբր իր համար մեկ ա, բայց ես հո գիտեմ, որ դա իր համար հարված էր: Խղճում եմ իրեն: Ինձ հետ շատ էր կապված:

-Դե ոչինչ: Ինքն իրեն համարում ա Հայաստանի լավագույն հոգեթերապևտը, ուրեմն թող իր հարցերը լուծի:

Մի պահ երկուսն էլ լռեցին:

-Արմեն, ի՞նչ ես մտադիր անել, ո՞նց ես իրավիճակը շտկելու,-խախտեց լռությունը Սոֆյան:

-Ի՞նչ առումով ես հարցնում:

-Դե էն, որ հիմա քո մոտ մասնագիտական կրիզիս ա, էլ այցելուներ գրեթե չունես:

-Ես մտածել եմ էդ մասին: Էլ ինձ մոտ այցելուներ չեմ ընդունելու: Հիմա ես աշխատում եմ իմ հատուկ մեթոդի ստեղծման ուղղությամբ, որը որպես դասընթաց կվաճառեմ միջազգային լսարանին, բացի այդ էլ օնլայն

հոգեբանական խորհրդատվություններ կմատուցեմ: Ես գերազանց գիտեմ թե՛ անգլերեն, թե՛ ռուսերեն: Կարևորը դու իմ կողքին ես: Քեզ հետ ես պատրաստ եմ անցնել ցանկացած դժվարության միջոցով, հաղթահարել ամենաբարդ խոչընդոտները: Դու իմ ուժի աղբյուրն ես:

-Ճի՞շտ որ,-ուրախ ասաց Սոֆյան:

-Իհարկե: Ի դեպ, ես երկու օր առաջ խոսում էի իմ ամերիկացի գործընկերոջ ու ինձ մտերիմ մարդու հետ: Անունը Օլիվեր է: Նրան պատմեցի քո մասին:

-Ի՞նչ ասացիր,-անհամբեր հարցրեց Սոֆյան:

-Ասացի, որ գտել եմ շատ հզոր ուժի աղբյուր ի դեմս քեզ:

-Վա՛յ,- բացակաչեց Սոֆյան:

-Բայց նա ինձ ասաց, որ ուժեղ տղամարդն իրեն հարկավոր բոլոր ռեսուրսներն ու անսահմանակ ուժը պետք ա գտնի իր մեջ ու չպետք ա նա էդ բոլորը պայմանավորի ուրիշով:

-Այսի՞նքն:

-Այսինքն, ուզում ա ասի, որ ես պիտի լինեմ երջանիկ և ուժեղ՝ անկախ նրանից կլինեմ միայնակ, թե կողքիս կլինի սիրածս կինը,-պատասխանեց Արմենը:

-Ստացվում ա՝ դու ուժե՞ղ չես:

-Էդպես ա ստացվում: Բայց ես քեզ կասեմ հետևյալը . միգուցե ես ամենաուժեղ տղամարդը չեմ, բայց ամենաերջանիկն եմ,-ասաց Արմենը՝ ձեռքով բռնելով Սոֆայի ուսը, գլուխը մոտեցնելով նրա գլխին:

Մեղրի 2026

Յատուկ Դրէմ